

ԵՐՈՒՍԱԳԷՄ, 6 (ՌՈՅԹԸՐՁ).- Իսրայելեան բանակը երկ հաղորդեց, որ կանգնուած է պաղեստինեան բեռնակառք մը, որ կը փոխադրէր երկար հասողութեամբ «Բասսամ 2» իրթիններ, որոնք կրնան հարուածել իսրայելեան որեւէ քաղաք: Բանակը կը հաղորդէ, թէ իրթինները ծածկուած էին բանջարեղէններով լեցուն ստուկներու տակ: Բեռնակառքը Այսրորդանանէն կ'ուղղուէր Ժնիւ:

ՄԵՐ  
ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ  
Վարդանանց Տօնին առիթով, վաղը՝ Ուրբաթ, 8 Փետրուար 2002ին, «Ազդակ» լոյս պիտի չտեսնէ: Մեր յաջորդ թիւը՝ Շաբաթ, 9 Փետրուարին:

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ԱՒԱՐԱՅՐԻ ՈԳԻՈՎ

Հայ ժողովուրդի գոյամարտերու ամենէն անկիւնադարձայիններէն համարուող Աւարայրի ճակատամարտը «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» գաղափարախօսութեամբ մեզ փրկեց իբրեւ հա՛յ քրիստոնէայ, իբրեւ ազգ ու ժողովուրդ:

Աւարայրները շարունակուեցան մեր ժողովուրդի կենսաքին մէջ եւ տարբեր պայմաններու եւ տարբեր ժամանակներու մէջ հայ ժողովուրդը կերտեց նոր Վարդան Մամիկոնեաններ ու Ղեւոնդ Երեցաներ, ընդդէմ՝ նոր Յակերտներու:

Միայն Փետրուար ամիսը իր մէջ կը բովանդակէ Աւարայրեան գաղափարախօսութեան տարբեր տարողութեամբ երեք դրսեւորումներ: Լինելու ժամանակը գոյամարտը դարձեր էտք, 18 Փետրուար 1921ին, հայ ժողովուրդը ոտքի կը հանէր ընդդէմ համայնավար բռնատիրութեան եւ ի խնդիր ապստ ու անկախ ապրելու հայութեան հաւաքական իրաւունքին: Տասնամեակներ էտք, նոյն ոգին, նոյն գաղափարախօսութիւնը այս անգամ ոտքի կը հանէր արցախահայութիւնը, որ միանգամընդմիջտ կը վճռէր թօթափել ապերիական լուծը: Վարդան Մամիկոնեանէն մինչեւ Համապասպներ եւ անոնցմէ մինչեւ Աշոտ-Բեկորներ, հայ ժողովուրդը իր լինելութեան կոշիւն մէջ մղեց Աւարայրի պանայան ճակատամարտեր:

Արդարեւ գոյապահպանման ա՛յս միջոցն է ու ա՛յս վարքագիծը, որ հայ ժողովուրդը փրկեց ու վերապրեցուց իբրեւ ազգ ու պետականութիւն: Սարգսապար՝ հայ ժողովուրդին երկրորդ Աւարայրը, փրկեց Յեղասպանութեան ենթարկուած հայութեան մնացորդացը եւ մեզ կերտեց իբրեւ ազգ-պետութիւն: Լեռնահայաստանի գոյամարտը փրկեց Չանգեպուրը: Արցախեան պատմամարտը՝ արցախահայութիւնը:

Այժմ նոր տիպի Յակերտներ կը սպառնան հայութեան ազգային անվտանգութեան, Հայաստանի Հանրապետութեան պետականութեան հպօրացման, Արցախի հայապատկանելիութեան ամրագրման ծրագիրներուն եւ կազմակերպ Սփիւռքի կայացման ու բազմաբնակաւանային աշխատանքներու յաջողութեան: Նոր տեսակի Աւարայրներ մղելու հարկադրանքին դիմաց կը գտնուինք ազգովին:

Աւարայրեան գաղափարախօսութեամբ պայքար պէտք է ծաւալել պատմութիւնը նենգափոխող թուրք ցեղասպանին դէմ՝ առաջադրելով Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչումը: Պայքարի ըմբռնման բացարձակ այս սկզբունքէն մեկնելով՝ լուսանցքէն ալ անդին նետել ցեղասպանին հետ «հաշտութեան» մտային մարզանքներ փորձող վասակեան բոլոր մտեցումները:

Նոյն ոգիով անասան պահել հայոց պետականութիւնը՝ թուրք-ապերի միացեալ բոլոր ոտնձգութիւններուն դէմ: Միեւնոյն վճռակամութեամբ եւ ամէն գնով խնդրոյ առարկայ չդարձնել Արցախի հայապատկանելիութիւնը:

Տարբեր տեսակի Աւարայր մղելու հարկադրանքին տակ է նաեւ այսօր Սփիւռքահայութեան միջնաբերդը՝ իրանահայ գաղութը: Տնտեսական դժուարին պայմանները յաղթարեւելու, կրթական մարտը բարելաւելու, իրանահայութեան հայրենիքի քաղաքական բեմին վրայ բոս արժանւոյն ազդեցիկ դերակատարութիւն ապահովելու պայքարն է, որ կը սպասուի այս գաղութէն՝ ի խնդիր ամբողջ Սփիւռքահայութեան կազմակերպ ուժի վերածման առաջադրանքին:

Բազմաճակատ Աւարայրի քաղաքական-դիւանագիտական դաշտ պէտք է մուտք գործել այսօր՝ դեկավարման արդի համակարգի անհրաժեշտ գիտելիքներով, համապատասխան պատրաստուածութեամբ ու մասնագիտացած մարդու ծով. եւ այս անգամ պայքարելու եւ յաջողելու շրջուած տրամաբանութեամբ՝ «Մե՛ր սուրբը, մե՛ր պարանոցը»:

## ՊԱՂԵՍԻՆԵՆԵՐԻ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՏԱԳՆԱՊ

### ԱՐԻԷԼ ՇԱՐՈՆ ԱՅՍՕՐ ՍՊԻՏԱԿ ՏԱՆ ՄԷՋ ԿԸ ՏԵՍԱԿՅԻ ՃՈՐՃ ՊՈՒՇԻ ՇԵՏ

Իսրայելի վարչապետ Արիէլ Շարոն երէկ Միացեալ Նահանգներ ուղղուեցաւ նախագահ Ճորճ Պուշի հետ քննարկելու Համար պաղեստինեան շարունակուեցան մեր ժողովուրդի կենսաքին մէջ եւ տարբեր պայմաններու մէջ հայ ժողովուրդը կերտեց նոր Վարդան Մամիկոնեաններ ու Ղեւոնդ Երեցաներ, ընդդէմ՝ նոր Յակերտներու:

Շարոն գրեթէ վստահ է, որ Պուշի գործադիր պետի կանգնելու իսրայելի թափ տալով պաղեստինեան իշխանութեան ու անոր նախագահ Շաւքի Արաֆատի դէմ ճնշումներուն: Իսրայել եւ Միացեալ Նահանգներ կը պահանջեն, որ Արաֆատ ճնշէ ծայրայեղական շարժումները արգելելով

անոնց յարձակումները իսրայելացիներուն դէմ: Իսրայել եւ Ուաշինկթըն կ'ըսեն, որ Արաֆատը ցարդ անհրաժեշտ միջոցառումները չէ որդեգրած արմատախիլ ընելու Համար ծայրայեղական ու անարեկական խմբակները:

Ուաշինկթընի որդեգրած կեցուածքը Իսրայելի Հանդէպ դժգոհ կը պահէ Եւրոպական Միութիւնը: Ըստ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Իւլիան Գալլիերի՝ Եւրոպական Միութիւնը տարակարծիք է Ուաշինկթընի հետ, որ գործադիր կը կանգնի Շարոնի՝ Միջին Արեւելքի տազնապին մէջ: Վետրին խիստ ոճով քննադատեց Շարոնի քաղաքականութիւնը պաղեստինցիներուն հանդէպ: Ան աւելցուց, որ Ե. Միութիւնը չի բաժնոր Ուաշինկթընի կեցուածքն ու քաղաքականութիւնը, որ ամբողջական գորակցութիւն կը յայտնէ Շարոնի կառավարութեան ու քաղաքականութեան: Վետրին ըսաւ նաեւ, որ Եւրոպական Միութիւնը այս մտա-

### ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ՝ Հ. Յ. Դ. ՍԱՐԴԱՐԱՊԱՏԱԿՈՒՄԲ

Լիբանանեան Ազգային Կուսակցութեան նախագահ Ղազի Մունգիթի գլխաւորութեամբ պատուիրակութիւն մը երէկ այցելեց Հ. Յ. Դ. Սարգսապատ ակումբ, ուր հանդիպում մը ունեցաւ Հ. Յ. Դ. Սարգսապատի Կեդրոնական Կոմիտէին հետ:

Քննարկումի նիւթ դարձան երկրին քաղաքական, տնտեսական եւ ընկերային հարցեր:

Խօսակցութեան ընթացքին երկուստեք հաստատուեցաւ իրբանանեան քաղաքական կենտրոնի մէջ կուսակցութեան կարեւոր դերակատարութիւնը, ընդգծելով անոնց միջեւ գործակցութեան անհրաժեշտութիւնը:

Իր կարգին, երեսփոխան Ապտէլ Ռահման Ապտէլ Ռահման եւս երէկ այցելեց Հ. Յ. Դ. Սարգսապատ ակումբ եւ տեսակցեցաւ Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի անդամներուն հետ:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան երկրին ներքին բեմը յուզող հարցեր: Նաեւ արժարձուեցան շրջանային խնդիրներ:

Շար.՝ էջ 3

### ՊԻՏԻ ԶԹՈՅԼԱՏՐԵՆՔ ՊԵՆՉԻՆԻ ԲԱՐՁՐ ՍԱԿԵՐՈՒ ՊԱՐՏԱԴՐԱՆՔԸ

ԿԸՍԵ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՅՏՈՒՆ

Ուժանիւթի նախարար Մուհամէտ Ապտէլ Համիտ Պալտուն երէկ յայտարարեց, որ «փորձեր կը կատարուին՝ ճնշումներով քաղաքացիին պարտադրելու պենզին աւելի բարձր սակեր, բայց մենք նման բան պիտի չխնայուինք, եւ պիտի ընդառաջենք միայն տրամաբանական պահանջներուն»:

Նախարարը ըսաւ, որ պենզինի տազնապ չկող երկրին մէջ. ան յայտնեց, որ Լիբանանի մէջ կայ 75 հազար թոն պենզին, որ բաւարար է երկրին 25 տոկոս կարիքին, հետեւաբար պենզինի պակաս չկայ:

Նախարար Ապտէլ Համիտ Պալտուն զգուշացուց, որ «սպառողի պաշտպանութեան վարչութեան» քննիչները Չորեքշաբթի օր սկսած են ստուգումներ կատարելու վառելանիւթերու կայարաններուն մէջ, որ պէտք է պենզին ունեցող եւ գայն չվաճառող կայարանները տուգանքի ենթարկեն:

Հարցազրույցի մը մէջ Պալտուն ըսաւ, թէ ամէն մարդ գիտէ, որ կայարանները յաւելեալ արժէքի տուրքի նախօրեակին այդ տուրքը կանխելով՝ մեծ քանակութեամբ վառելանիւթ ամբարած են, ուստի այս գծով արհեստական տազնապ ստեղծելը քոչական յանցանք է, որուն պատիժները նախատեսած է օրէնքը:

Միւս կողմէ, Պալտուն լուրջաբար հասկցուց, որ կրնայ վառելանիւթ ներածող ընկերութիւններուն պարտադրել, որ պենզին յանձնեն կայարաններուն, նկատել տա-

լով, որ օրէնքն ու կանոնները իրեն հնարաւորութիւն կու տան բազմաթիւ ձեւերով միջամտելու այս հարցին, եւ այդ ձեւերէն մէկն է ներածումի արտօնագիրէ գրկել ամէն ընկերութիւն, որ կը մերժէ պենզին յանձնել կայարաններուն:

Պալտուն բացատրեց, որ ընկերութիւնները արհեստականօրէն տազ-

նապ մը կը ստեղծեն, իրենց շահարձինը աւելցնելու եւ իրենց պահանջը պարտադրելու համար:

Պալտուն հաւաստեց, որ պատրաստ է քննարկելու բոլոր հարցերը եւ պահանջները, պայմանաւոր որ ընկերութիւնները հրաժարին քաղաքացիին ու ամբողջ երկրին շահերուն վնասող ծիւղական ոճէն:

### 50 ՀԱՉԱՐ ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐ ԴԻՄԵՅԻՆ ԴԱՍԱԴՈՒԼԻ, ԻՍԿ ԱՅՍՕՐ ԱՆՈՆՔ ԿԸ ԿԱՏԱՐԵՆ ՆՍՏԱՅՈՅՅ

Սեփական վարժարաններու ուսուցիչները երէկ կատարեցին ընդհանուր դաժադու մը, որուն մասնակցեցան մօտ յիսուն հազար ուսուցիչներ, բողոքելու համար իրենց պահանջներու անտեսումին դէմ. անոնք այսօր նստացոյց պիտի կատարեն նախարարաց խորհուրդի նստավայրին առջեւ:

Յիշեցնենք, որ ուսուցիչներու զլխաւոր պահանջները կը վերաբերին գործի արժակման կամ պաշտօնավարութեան աւարտի հատուցումին փոխարէն ամսական հանգստեան թոշակ ստանալ, վճարել իրենց խոստացուած յաւելումներն ու աստիճանի բարձրացումները, ինչպէս նաեւ որոշ հատուցումներ:

### ՄՐԱՏ - ԸՆԴՈՒՆ ԸՆԴՈՒՄ

Կրթութեան նախարար Ապտէլ Ռահման Մրատ երէկ այցելեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ անոր հետ քննարկեց ուսուցիչներուն պահանջներն ու պետական վարժարաններու պայմանագիրով ուսուցիչները մնայուն դարձնելու օրինագիրը:

Մրատ յայտարարեց, որ պետութիւնը սերտ առնչութիւն հունի սեփական վարժարաններու ուսուցիչներու հարցին հետ, իսկ անոնց հետ տարակարծութեան առանցքն է անոնց հանգստեան թոշակի պատասխանատու կողմը. արգարեւ, պետութիւնը կ'ըսէ, թէ անոնք պէտք է լուծեն հարցը, մինչ ուսուցիչները պետութիւնը պատասխանատու կը նկատեն այս հարցին լուծման:

Մրատ ըսաւ, որ ասիկա միակ կէտն է, որուն շուրջ պիտի բանակցի ուսուցիչներու պատուիրակութեան հետ:

## ԱՅՂԱՆԻՍԱՆ

### ՈՒՍԱՍԱ ՊԸՆ ԼԱՏԵՆԻ «ՔԱՅԻՏԱ» ՑԱՆՅԸ ՏԱԿԱԻՆ ԿԸ ՄԵԱՅ ԵԿԱՏԱՌԵԼԻ ՈՒՄ ՍԸ

ԴԻՏԵԼ ԿՈՒ ՏԱՅ ՍԻ. ԱՅ. ԷՅ.Ի ՏՆՕՐԵԼՆ



Ճորճ Թեմը

Աֆղանիստանի փոխանցման հանգրուանի ղեկավար Համիտ Քարգայ երէկ այցելած է արեւմտեան Հերաթ քաղաքը՝ մայրաքաղաքէն դուրս աֆղան քաղաք մը առաջին այցելութեամբ:

Սակայն, կառավարութեան ճիգերը՝ արեւելեան կարտէզ քաղաքին մէջ իշխանութեան շուրջ արեւմտի պայքարին վերջ տալու համար, ի դերեւ ելած են, երբ իշխանութեան հեռացումը նահանգային կառավարիչը մերժած է ընթացք տալ Քարգայի մէջ խաղաղարար բանակցութիւններու մասնակցելու մէկ առաջարկին:

Հերաթի շրջակայ գօտին յաճախ Աֆղանիստանի ամենէն տազնապալի շրջաններէն եղած է: Իրան անցեալին յաճախ ամբաստանուած է Հերաթի կառավարիչը:

Շար.՝ էջ 3

### ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ՓԱՍՕՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ԵՐԵՒԱՆ (Հ. Յ. Դ. ՄԱՍԼՈՅ ԴԻՒԱՆ, 6 ՓԵՏՏՐՈՒՄ 2002).- Համահայկեան Ընկերվարական ՓԱՍՕՔ Կուսակցութեան երիտասարդական բաժնի համագումարը տեղի կ'ունենայ 7-ին 10 Փետրուարին: Համագումարին հրաւիրուած են ընկերվարական կուսակցութիւններու երիտասարդական միութիւնները:

Հ. Յ. Դ. Բիւրոյի երիտասարդական Գրասենեակին կողմէ ժողովին կը մասնակցին ընկերներ Արամ Յրանգեան (Հայաստանէն) եւ Յակոբ Յովակիմեան (Յունաստանէն):

Հ. Յ. Դ. Յունաստանի երիտասարդական Միութիւնը եւս առանձին պատուիրակութեամբ կը մասնակցի համագումարին:

## ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

### ՀԱՅՐԵՆԻ ԶԱԽԱԽՔ

«Ազդակ» յատուկ հրատարակութիւն: 496 էջ:

●Ստանալու համար դիմել գրախանութներ՝ Համազգային, Նարեկացի, Ոսկեդար, Ուրֆալեան եւ Կոմիտաս:

●Քովանդակութիւնը տեսնել էջ 2:

ԳԻՆ՝ 15.000 Լ.Ո.

### ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՐԻՈՅ ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ

Հանրապետության նախագահ գործադիր Լահուտ երկր ընդունեց Սուրիոյ եւ Լիբանանի գրաստարարութեան նախարարներ Սաատալլա Աղա Քալասան եւ Քարամ Քարամը:

Սուրիացի պաշտօնատարը նախագահ Լահուտի փոխանցեց Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի ողջունները, եւ անոր ներկայացուց Հինգրոսի օր լիբանանցի իր պաշտօնակիցին հետ ստորագրուելիք գրաստարարութեան մարզէն ներս գործակցութեան համաձայնագիրը:

Նախագահ Լահուտ բարձր գնահատեց Սուրիոյ ազգային կեցողութեան քաղաքականութիւնը, հաստատելով, որ հանգուցեալ նախագահ Հաֆէզ Ասատի ուղեգրով կ'ընթանայ նախագահ Պաշար Ասատ:

Սուրիացի պաշտօնատարը հանդիպումէն ետք խօսեցաւ գրաստարարութեան կարեւորութեան եւ այս մարզէն ներս Լիբանանի եւ Սուրիոյ զիրար ամրողջացնելու օգտակարութեան մասին:

Նախագահ Լահուտ երկէ նաեւ ընդունեց ընդհանուր դատարար Ասան Ասատի, պետութեան անվերտանգութեան ուժերու ընդհանուր տնօրէն գործադիր Մանուէր, ոստիկան ուժերու հրամանատար գործադիր Սայիտ Իտր եւ արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղարի պաշտօնակատար Նասի Ապի Ասին:

### ՍԱՐՈՆԻՆԵՐՈՒ ԼԻԿԱՆ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵ ՏՈՒՐՔԵՐՈՒ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Մարոնիներու Լիկայի Գործադիր Խորհուրդը երէկ Հարէս Ծրնապի ղրխաւորութեամբ գումարուած իր ժողովէն ետք հաղորդագրութեամբ մը նկատել տուաւ, որ խորհրդարանի վերջին նիստերուն բացառապէս դարձաւ, որ երեսփոխաններ լարուած են կառավարութեան դէմ եւ վերջինս պէտք է դաւեր քաղէ իրեն ուղղուած այդ քննադատութիւններէն եւ սրբազրէ իր ընթացքը:

Լիկան քննադատեց յաւելեալ արժէքի տուրքի գործադրութեան ոճը եւ սանձարձակ օրինազանցութիւնները, որոնք կը հաստատեն, թէ նախնարարի էր յետաձգել անոր գործադրութիւնը:

Ծար.ը՝ էջ 10

### ՄԱՀԱԶԴ

- Տէր եւ տիկին Մանուէլ Դազարեան եւ զաւակը՝ Նարինէ
- Տէր եւ տիկին Ժաք Դազարեան եւ զաւակը՝ Տէր եւ տիկին Դազար Դազարեան
- Տիկին Ովսաննա Մարգարեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Յարութ Դազարեան եւ զաւակուհի
- Տէր եւ տիկին Ժան Դազարեան եւ զաւակուհի
- Տէր եւ տիկին Պարոյր Սոյազեան եւ զաւակուհի
- Տէր եւ տիկին Աւետիս Սուլեյման եւ զաւակը՝ Նէնսի եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց զաւակին, եղբոր, թոռան եւ նշանածին:

### ՆԱԶԱՐԵԹ ՂԱԶԱՐԵԱՆԻ (Ծնեալ 1977ին)

մահը, որ պատահեցաւ Զորքաբերի, 6 Փետրուար 2002ին, երեկոյեան ժամը 7:30ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Հինգշաբթի, 7 Փետրուար 2002ին, կէսօրէ ետք ժամը 3:30ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հաճութեամբ իր ընտանիքէն:

### ՄԱՀԱԶԴ

- Տիկին Մարո Գասարեան եւ զաւակները՝ Վարանդ, Վարդան եւ Հրակ
- Տէր եւ տիկին Վարդան Գասարեան
- Տէր եւ տիկին Մինաս Գասարեան եւ զաւակուհի
- Տէր եւ տիկին Գէորգ Քէօզկէրեան եւ զաւակուհի
- Տիկին Այտա Արէլեան եւ զուսուրը
- Տէր եւ տիկին Ալեքս Արէլեան
- Տէր եւ տիկին Գէորգ Գարաճրեան եւ զաւակուհի
- Տէր եւ տիկին Տօթթ. Պետրոս Գարաճրեան եւ զաւակուհի
- Տիկին Մարի Մարաֆեան եւ զաւակուհի
- Տէր եւ տիկին Վարուժան Կոստանեան եւ զաւակուհի
- Տէր եւ տիկին ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, քեռայրին, անբձազին եւ հարազատին:

### ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՍԱՐՃԵԱՆԻ (Ծնեալ՝ 1948ին)

մահը, որ պատահեցաւ Երեքաբերի, 5 Փետրուար 2002ին, կէսօրէ ետք ժամը 4:30ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Զորքաբերի, 6 Փետրուարին, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Զորքաբերի 6, Հինգշաբթի 7 եւ Ուրբաթ 8 Փետրուարին:
- Կր ինդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել Նահր Էլ Մոթի «Անի» սկումբի վարչութեան:

### ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՆԵՊԻՇ ՊԵՐԻԿ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵ ՅԱԲԵԼԵԱԼ ԱՐԺԵԻ ՏՈՒՐՔԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիշ Պերիկ երէկ երեսփոխաններու հետ իր ունեցած հանդիպումներուն ընթացքին հաստատեց, որ սխալներ եւ բացմամբ ինչ օրինազանցութիւններ գործուած են յաւելեալ արժէքի տուրքի գործադրութեան ժամանակ:

Պերիկ ընդգծեց հսկողութեան մարմիններու թիւ տալու անհրաժեշտութիւնը, մասնաւորապէս սպառողի պաշտպանութեան վարչութեան գործունէութեան, նկատել տալով, որ այս հարցին մասին բաւարար տեղեկութիւն չէ փոխանցուած եւ տուրքը կուրորէն պարտադրուած է անոր բնակարանի անկէ գերծմնացող ապրանքներու վրայ:

Տեղեկութիւնները եւ լուսարանութիւնները պէտք է փոխանցուէին տուրքի գործադրութեանն առաջ, որպէսզի անոր ընթացքը առողջ մնայ, բայց նոյնիսկ տուրքը գործադրող եւ անոր հսկող մարմինները կարիքը ունին պատրաստութեան եւ փորձառութեան, ըսաւ Պերիկ, աւելցնելով, որ ելեմուտքի եւ տնտեսութեան նախարարութիւնները աւելի լաւ պէտք է պատրաստուէին այս քայլին:

Սեփական վարձարաններու ուսուցիչներու դասադուլին մասին Պերիկ յայտնեց, որ ինք հեռաձայնով է վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ անկէ պահանջած փութացընել կառավարութեան մօտ գտնուող այն օրինագիրը, որ կը վերաբերի ուսուցիչներու պահանջներուն, մասնաւորապէս անիկա չի ծանրաբեւեռ պետական գանձարկը:


Շրջանային միջազգային զարգացումներուն մասին խօսելով, խորհրդարանի նախագահը մտախաբութիւն յայտնեց, որ Իսրայէլի քարոզչական արշաւը կընայ յաջողած ըլլալ ԱՖղանիստանի պատերազմէն ետք ամերիկեան արշաւը տանելու իր ցանկացած ուղղութեամբ եւ իր ճշդած թիրախներուն դէմ: Այս ծիրէն ներս ան նկատել տուաւ, որ Հիւսիսային Բորէա ամերիկեան թիրախ դարձած է, եւ անոր միակ յանցանքը Իսրայէլի դէմ գնող երկիրը:

### ԿՈՒՋՈՒՆ

- Կարպետ եւ փորձառու ոսկերիչներ (սետքեր): Ըն. 01-242549:
- 2 66ցատեղեակ, հիւրարահ, ճաշարահ եւ յարկից մասեր: Երկաթ կամ մուրքի կից: Ըն. 03-968039, 01-249467:

### ՏԱԽՈՒ ՅԱՐԿԱՐԱԺԻՆ

- 2 66ցատեղեակ, հիւրարահ, ճաշարահ եւ յարկից մասեր: Երկաթ կամ մուրքի կից: Ըն. 03-968039, 01-249467:



### ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՍԱՐՃԵԱՆԻ (Ծնեալ՝ 1948ին)

մահը, որ պատահեցաւ Երեքաբերի, 5 Փետրուար 2002ին, կէսօրէ ետք ժամը 4:30ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Զորքաբերի, 6 Փետրուարին, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Զորքաբերի 6, Հինգշաբթի 7 եւ Ուրբաթ 8 Փետրուարին:
- Կր ինդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել Նահր Էլ Մոթի «Անի» սկումբի վարչութեան:

ներուն գէնը վաճառելն է: Պերիկ նաեւ նկատել տուաւ, որ Իսրայէլի փոխ վարչապետը կ'իստատեց ձեռք չ'ընելու իր այն ցեղութիւնը, հարց տալով, թէ արդեօք լուրջ վտանգ կը սպառնայ Իսրայէլ:

Այս բոլորին վրայ կ'աւելնան Պաղեստինի մէջ իսրայէլեան վայրագութեանց մագլցումը եւ Իրանի դէմ կիրքերու բորբոքումը, ըսաւ ան, հաստատելով, որ արարները խելակորոյս դարձած են եւ կը փորձեն ամէն գնով Միացեալ Նահանգները գոհ պահել:

Խորհրդարանի նախագահը ըսաւ, որ ինք կը յարգէ արաբական վեհաժողովը Պէյրութի մէջ ընդունուած թուականին վրայ:

### ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ

### ԵՒ ԱՅԼ ԱՆՁՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆրիլիք Լը Քուրբիէն, որ հանդիպումէն ետք յայտարարեց, թէ շնորհաւորած է պետական պիւտճէի վաւերացումը, որ պիտի նպաստէ պիւտճէական բացի սահմանափակումին:

Դեսպանը նաեւ ըսաւ, որ յաւելեալ արժէքի տուրքը արդար է, նաեւ կը թեթեւցնէ տնտեսութեան բեռը:

Լը Քուրբիէ յայտնեց, որ Հարիրիի ներկայացուցած է խղճողութեան գործընթացը վերակենդանացնելու ֆրանսական պատկերացում մը, որ կը նախատեսէ պահեստիներու պետութեան միջազգային նախաձեռնում եւ այդ պետութեան կառոյցները հաստատելու համար ընտրութիւններու կայացում:

Վարչապետ Հարիրի երէկ նաեւ ընդունեց հարազատ պետական միջոցներու նախարար Լուի Քրիտանին եւ պետական վարչամեքենայի բարգաւաճման հարցերու նախարար Ֆուատ Սաատը:

Աշխատանքի արարական կազմակերպութեան նախագահ Խարաթիմ Քուրբիէ Հարիրիի հետ ընկերակցեց երկկողմանի գործակցութիւնը, ինչպէս նաեւ ընկերային ապահովագրութեան եւ աշխատաւորական իրաւունքներու հարցերը:

Հարիրի երէկ նաեւ ընդունեց Սուրիոյ եւ Լիբանանի գրաստարարութեան նախարարներ Սաատալլա Աղա Քալասան եւ Քարամ Քարամը:

Հանդիպումին ներկայ էր Լիբանանեւտրիական Գերագոյն Խորհուրդի ընդհանուր քարտուղար Նասրի Խուրի:

### ՃԵՄԱՐԱՆԻ ՎԻԳԷՆ ԶԱՔԱՐԵԱՆ ՖՈՆՏԻՆ

- Ստեփան Գարապոյաճեանի մահուան առիթով, Զաքարեան ընտանիք՝ 20 \$

### ՎԱՐԴԱՆԵՑ ՏՕՆԱԿԱՍԱՐՈՒԹԻՒՆ

Կազմակերպութեամբ՝ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՅ ԵՂԱՅՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅԻ

### Պատգամախօս՝ ԸՈԳՁ. Տ. ՊԱՐԹԵՒ ՎՐԴ. ԿԻԼԻՄԵԱՆ

- Գեղարուեստական յայտագիր
- Տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 7 Փետրուար 2002, կէսօրէ ետք ժամը 5:00ին Եղբայրակցութեան աղօթարահին մէջ:

Շուկանաւորութեամբ՝ **ԼԻԲԱՆԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՏԻԿԻՆ ԱՆՏՐԵ ԷՄԻԼ ԼԱՇՈՒՏԻ** Նախագահութեամբ՝ **ԳԵՐՁ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ** Առաջնորդ Լիբանանի Եայոց Թեմի Պատուոյ հիւր՝ **ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՍԵԼՔՈՆ ՊՈՒԼՂՈՒՐՃԵԱՆ** Բարերար Ա. Պ. Ը. Բ. Կեդրոնի

**ՃԱՇԿԵՐՈՅԹ** Կազմակերպութեամբ՝ **ԼՕՍԻ ԵՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ** Տեղի պիտի ունենայ Զաքար, 23 Փետրուար 2002ին, երեկոյեան ժամը 9:00Ը սկսեալ, Զերաթոն - Զորալ Պիչ պանդոկի «Salles Des Ambassadeurs» սրահին մէջ: **Յ. Գ. - Հաճեցէք հաստատել ձեր ներկայութիւնը մինչեւ Հինգշաբթի, 21 Փետրուար 2002, հեռաձայնելով հետեւեալ թիւերուն՝ 01/265359 - 01/242898:**

### ԱՇԽԱՏԱԴՐՈՒԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԱԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ՓՈՂՈՑ ԻՋՆԵԼՈՒ ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ՈՒՂՂԵԼ

Աշխատաւորական ընդհանուր համադաշնակցութեան գործադիր խորհուրդի դիւանը երէկուան իր ժողովին որոշեց խորհուրդին փոխանցել ընդհանուր գործադուլ եւ ցոյցեր կատարելու առաջարկը:

Համադաշնակցութեան նախագահ Ղասսան Ղըսն յայտնեց, որ խորհուրդը հրահարուեցաւ երեքշաբթի օր գումարելու ժողով մը, ճշդելու համար այս քայլերուն յուսկանները:

Ան պահանջարկներ յայտնեց ուսուցիչներու դասադուլին եւ քննադատեց կառավարութեան հարկային քաղաքականութիւնը, մանաւանդ՝ յաւելեալ արժէքի տուրքի գործադրութեան ստեղծած իրարանցումը:

Եթէ կառավարութիւնը, գիտնալով հանդերձ ժողովուրդին վիճակն ու տրամադրութիւնները, կը մերժէ «ճամբու կիսուն հանդիպիլ» աշխատաւորականներուն հետ, ապա պէտք է գիտնալ, որ աշխատաւորները ստիպուած պիտի ըլլան յառաջ երթալու, առանց վախճալու հետեւանքներէն, որովհետեւ արդէն անոնցմէ խլուած են ապրուստի բոլոր երաշխիքները, ըսաւ ան:

### ԱՐԵՎԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ

### ԸՈՒՆԵԹ ԸԱՀՈՒՄՆԻ ՍԵՒՏԵԹ ՆԵԺԵԹ ԵԿԵՂԵՑՈՅՄԵՁ

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս ժուճի, Արեւիկայի եւ շրջակայից Ս. Յարութիւն Եկեղեցւոյ քաղաքացիները եւ հոգեւոր հովիտները կազմակերպած են Սեւ Պահոց շրջանի տնտեսութեան Արեւազալի արարողութիւն՝ Ընտէր Զառուանի Սեւտէր Եկեղեցւոյ մէջ, ամէն երեքշաբթի առաւօտեան ժամը 9:30ին, Երեքշաբթի, 12 Փետրուար 2002 թուականին սկսեալ:

Առ կողմ հրահանգեց Սազարեթ Եաշուի, Պէյթ Գօգոյի եւ շրջակայից մեր սիրելի հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու Ս. արարողութեան:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԺՈՒՆԻԿ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՈՅ

### ՀԱՅՐԵՆԻ ԶԱՒԱՍԻՔ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Մէկ ազգ՝ Վարանդ Փափագեան
- Ախալքալակի պայքարը՝ Բուրճ
- Տաշիրի գաւառին բռնագրաւումը՝ Բուրճ
- Ընդհանուր ակնարկ Հայաստանի հիւսիսային սահմաններին վրայ՝ Լէօ
- Ջաւախքի պատմութիւն՝ Աշոտ Մելքոնեան
- Ջաւախքիցիները արեւմտահայ պատարական պայքարում՝ Աշոտ Մելքոնեան
- Ախալքալակի հայ համայնքին պատմութիւնը՝ Փրոֆ. Կ. Գ. Ղաֆարեան

Տանջուած ժողովուրդի մը շքանաղ հայրենիքը՝ Վ. Աւագեան

Նորօրեայ հոգեւոր կեանքը հիւսուորց Ջաւախք աշխարհում՝ Սանասար սարկաւազ Դուլիկեան

Ջաւախքի մշակութային կեանքը՝ Շաքար Քէլիչեան

Ջաւախքի աշուղները՝ Մովսէս Միրանի

Նշանաւոր Ջաւախքիցիներ՝ Զաքարեան

Ջաւախքի կրթական համակարգը՝ Եու. Նաւոյեան

Հայ մամուլը եւ գրատպութիւնը Ջաւախքում եւ Մեխիէթում՝ Վահան Մաղախեան

Բաց դարպաս՝ սահմանէն անդին՝ Շողիկ Աւրգեան

Ջաւախքի պատմական յուշարձանները՝ Մամուկ Կարապետեան

Վրաստանի քաղաքականութիւնը՝ Ջաւախքում եւ մշակութային կոթողների նկատմամբ՝ Մամուկ Կարապետեան

Հայ-վրացական կնճիղը՝ Արշակ Ջամադեան

Մեքէնական խնդիրը վրաց-ռուսական թարգմանութիւններում՝ Մամուկ Կարապետեան

ԱՅՍ ԱՍԻՍ

ՃՈՐՃ ՊՈՒՇ ՍԵՌԻԼ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

ՍԵՌԻԼ, 6 (ՌՈՅԹԸՐԸ).- Հարաւային Քորէա- յի արտաքին գործոց նախարարը Չորեքշաբթի օր յոյս յայտնեց, որ այս ամսուան ընթացքին Միացեալ Նահանգներու նախագահ ձորճ Պուշ- շի շրջանայեցիութիւնը բարենպաստ մթնոլորտ մը կը ստեղծէ Հիւսիսային Քորէայի հետ երկ- յօսութեան բարելաւման համար:

Միւս կողմէ, մեկնարաններ յայտնեցին, որ այս յոյսը կրնայ յուսախարութեան վերածուիլ, որովհետեւ Պուշի այցելութիւնը կրնայ կաս- կածի ենթարկել Հարաւային Քորէա - Հիւսի- սային Քորէա միացման քաղաքականութիւնը: «Կը յուսանք, որ նախագահ Պուշի այցելու- թիւնը բարենպաստ մթնոլորտ մը ստեղծէ Հիւ- սիսային Քորէայի հետ երկխօսութեան», ըսաւ արտաքին գործոց նախարար Չոի Սունկ Հոնկ: Ասիական շրջապտույտի ծիրէն ներս, նա- խագահ Պուշ Սեուլ պիտի մեկնի երկօրեայ այ- ցելութեամբ, Փետրուար 19էն 21:

ՌԻՍԱՍԱ ՊԸՆ ԼԱՍԷՆԻ «ՔԱՅԻՏԱ» ՑԱՆՅԸ ...

Շարունակուած Ա. Էջէն

րիչ իսմայիլ ինանի գործակից կանգնելու յանձնարումով՝ աֆղան պատերազմի այլ «իշխաններու» դէմ: Թէ՛ ինան եւ թէ՛ Թեհրան հերքած են ամբաստանու- թիւնը:

Երկրին տարածքին, մինչ այդ գրեթէ յառաջդի- մուծութիւն չէ արձանագրուած Փաշտուն խմբակի հատ- ածներուն միջեւ իշխանութեան շուրջ պայքարը լուծելու ճիգերուն մէջ:

Փաքթիայի վերջերս նշանակուած կառավարիչ Փատշահ ինան Ջատրան, անոր մայրաքաղաք կարտէ- գէն դուրս քշուած էր անցեալ շաբաթավերջին երկօր- եայ բախումներէ ետք՝ մրցակիցի մը ուժերուն հետ: Այս վերջինը կ'ըսէ, թէ ինք պէտք է կառավարիչ ըլլայ:

Բախումներուն պատճառով 50 զինեալ սպանուած է, եւ Ջատրանի հաւատարիմ ուժեր սպառնացած են հակադարձակողականի դիմել՝ քաղաքը վերագրաւե- լու համար, եթէ ան իշխանութեան չվերադառնուի: Կառավարութեան միջնորդներ անցեալ շաբաթ- վերջին կարտէգ մեկնած են, սակայն չեն կրցած մղել երկու կողմերը, որ խաղաղութեան համաձայնութիւն մը գոյացնեն:

Միւս կողմէ, Քարգայ յայտնած է, թէ ամերիկեան զինուորական սխալներ անմեղ զոհեր խած են հարա- տային Աֆղանիստանի մէջ յարձակումներու ընթաց- քին, սակայն ամերիկացիք ընդունած են, թէ սխալ- ներ արձանագրուած են, եւ միջադէպի մը պարագա- յին անոնք դիտումնաւոր կերպով սխալ ուղղութիւն ստացած են, ըստ «Ուաշինգթոն Փոսթ» թերթին, որ Քարգայի մէկ հարցազրոյցը հրատարակած է Երեք- շաբթի օր:

ԻՐԱՆ ԿԸ ՄՊԱՆԱՅ ԱՐՏԱՍՆԵԼ ԱՅՂԱՆ ԵՎ ՍՊԱՆԱՅ ԱՐՏԱՍՆԵԼ ԱՅՂԱՆ

Այլ գիծի վրայ, Իրան երէկ սպառնացած է արտաք- սել աֆղան զինեալ զեկավար Կուլպուտտին Հիքմա- թիարը, որ զինեալ պայքարի կոչ ուղղած է՝ օտար ուժերը Աֆղանիստանէն դուրս քշելու համար: Ներքին գործոց նախարար Ապտուլահաճ Մու- սաուր-Լարի իրանեան ԻՐՆԱ լրատու գործակալու- թեան յայտնած է, թէ Թեհրան ասիկա պիտի չընդու- նի եւ հարցը պիտի քննարկէ Աֆղանիստանի օրինա- կան կառավարութեան հետ: Հիքմաթիար Երեքշաբթի օր «Ռոյթըրզ» լրատու

ՔՈՒՆԵՅԹ ԲԱՐԻՂԻ ՉՏԱՐԱՆ ՍԸ ԱՌՃԱՍԱԲԱՐ ՓԱԿՈՒԵՑԱՒ

ՔՈՒՆԵՅԹ, 6 (ՌՈՅԹԸՐԸ).- Թեքնիք խանգա- րում մը եւ փոքրիկ հրդեհ մը պատճառ դար- ձան, որ Քուէյթի Շուայիա գաղարանի մէկ բաժինը փակուի, յայտնեց պաշտօնատար մը Չորեքշաբթի օր:

Շուայիա գաղարանի տնօրէնը՝ Հիւսէյն Իս- մայիլ ըսաւ, որ կազմի քումփրետօր մը խանգա- րում ունեցած է Երեքշաբթի գիշերը, եւ խողովա- կէ մը դուրս հոսած քարիւղը հրդեհ մը պատճա- րած է: Իսմայիլ աւելցուց, որ շուտով կարելի եղած է հրդեհը մարել: Չոհեք եւ վիրաւորներ չեն ինկած:

Քուէյթի քարիւղի համբերուն ու գաղարանե- րուն մէջ վերջերս սկսած են յաճախակի դառ- նալ արկածներն ու խանգարումները: Մէկ շա- բաթ առաջ պայթում մը տեղի ունեցած էր Ռաու- տաթէյն համքին մէջ, ուր չորս զոհեր արձա- նագրուած էին:

գործակալութեան յայտնած է, թէ կ'ընդդիմանայ Աֆ- ղանիստանի մէջ Քարգայի փոխանցման կառավա- րութեան, ըսելով, թէ ան «իմ երկիրս գրաւած» օտար ուժերու կողմէ հաստատուած է:

Ան ըսած է, թէ ազատ եւ անկախ Աֆղանիստան մը կ'ուզէ եւ մինչ այդ՝ «պայքարս պիտի շարունակեմ»:

ՄԻ. ԱՅ. ԷՅ. ԿԸ ԶՈՒՇԱՅՆԵ ԶԱՒԵԼԱՆ ԶԱՐԶԱԿՈՒՄՆԵՐԷ

Միւս կողմէ, Մի. Այ. էյ. ի տնօրէն ձորճ Թեքնիք երէկ յայտնած է, թէ Ուսամա Պըն Լատէնի «Քալի- տա» ցանցը տակաւին իշխող թայեպանները տա- պալած են եւ աւելի քան 1000 կասկածելի ձեռքարկա- լուծ է 60 երկիրներու մէջ, թեքնիք Քոնկրէտի յայտ- նած է. «Քալիտա տակաւին չէ բնաջնջուած»:

Ան շեշտած է, որ տակաւին ազատ եղող «Քալի- տա»ի ղեկավարները կ'աշխատին կազմակերպութիւնը վերականգնելու եւ անոր ահաբեկչական գործողու- թիւններուն վերակազմելու: «Պէտք է երկարատեւ պատերազմի մը պատրաստը- լինք», ըսած է ան:

Թեքնիք յայտնած է, թէ ամերիկեան թիրախներու դէմ գործողութիւններու կրնան ձեռնարկել Եւրո- պայի եւ Միջին Արեւելքի մեծ քաղաքներու մէջ ար- դէն հաստատուած «Քալիտա»ի ընդհանր եւ թէ ցանցը կրնայ շահագործել Սոմալիի, Եմէնի, Ինտոնեզիոյ եւ Ֆիլիպիններու նման երկիրներու մէջ այլ խմբակնե- րու հետ իր կապերը:

«Ամերիկեան դիւանագիտական եւ զինուորական կեդրոններ մեծ վտանգի տակ կը գտնուին, յատկա- պէս Իսրայէլի, Սէուտական Արաբիոյ եւ Թուրքիոյ, սակայն նաեւ աշխարհի տարածքին», զգուշացուցած է ան:

Միւս կողմէ, Թեքնիք յայտնած է, որ չի գիտեր, թէ Պըն Լատէն ո՞րք է, սակայն, թէ իր կարծիքով՝ թալի- պան ղեկավար մուլա Մոհամէտ Օմար որք է: (ՌՈՅԹԸՐԸ)

ՊՈՒԼԿԱՐԻԱ ԿԸ ԶԳՏԻ ԱՆԴԱՄԱԿՅԻԼ ՕԹԱՆԻ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Պուլկարիոյ նախագահ Կէրիկի Փարվանով Պրիւքսէլ կատարած իր այցելութեան ընթացքին, գորակցութիւն խնդրեց՝ ՕԹԱՆԻ եւ Եւրոպական Միութեան Պուլկարիոյ նախագահութեան հա- մար:

Պուլկարիա առիթ չու- նի մինչեւ 2004 անդա- մակցելու Եւրոպական Միութեան, սակայն կը յուսայ, որ կրնայ ՕԹԱ- նի անդամակցել, մաս- վերջերս Նոյեմբերին Փրակայի մէջ կատար- ւելիք ՕԹԱՆԻ վեհաժո- ղովին:

Նախքան Պրիւքսէլի վարչապետ Կի վերհոֆ- թատի հետ հանդիպելը, նախագահ Փարվանով յայտնեց, որ իր կառավա- րութիւնը կը փափաքի յստակ նշան մը ստանալ ՕԹԱՆԻ մասնակցելու վեհաժողովին:

Փարվանով հանդի- պումներ պիտի ունենայ նաեւ ՕԹԱՆԻ ընդհանուր քարտուղար Յորճ Ռո- նի անդամակցել, մաս- վերջերս Նոյեմբերին Փրակայի մէջ կատար- ւելիք ՕԹԱՆԻ վեհաժո- ղովին:

Փարվանով հանդի- պումներ պիտի ունենայ նաեւ ՕԹԱՆԻ ընդհանուր քարտուղար Յորճ Ռո- նի անդամակցել, մաս- վերջերս Նոյեմբերին Փրակայի մէջ կատար- ւելիք ՕԹԱՆԻ վեհաժո- ղովին:

Եւրոպական Միու- թիւնը յայտարարած էր նախապէս այն տար եր- կիրներուն անունները, որոնք կրնան իրեն ան- դամակցել մինչեւ 2004: Անոնք են. Լեհաստան, Չեխիա, Հունգարիա, Սլովաքիա, Սլովենիա, Լատվիա, Լիթվանիա, Էս- թոնիա, Կիպրոս եւ Մալ- թա:

ՅՍՏԱԿ ԹՈՒԱԿԱՆ ՍԸ ՊԻՏԻ ՃՇՂՈՒԻ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԱՆԳԱՐԱ, 6 (ՌՈՅ- ԹԸՐԸ).- Թուրքիա կը յուսայ, որ այս տարի յստակ թուական մը ճշդուի բանակցութիւն- ներու համար՝ Եւրոպա- կան Միութեան լիիրաւ անդամակցութեան նպա- տակով, յայտնած է ար- տաքին գործոց նախա- րար Իսմայիլ Ճէմ, Չո- ռեքշաբթի օր:

Ան կը խօսէր թղթա- կիցներու, Դանիոյ ար- տաքին գործոց նախա- րար Փէր Սթիկ Մէլլըրի հետ տեսակցութենէ մը առաջ:

Հասնելու համար: Թուրքիոյ մէջ Ե- Միութեան ներկայացու- ցիչը՝ Քարէն Ֆոկ, անց- եալ շաբաթ մտախախտ- թիւն յայտնած է, թէ Թուրքիոյ մէջ բարեկար- գումներու արագ ընթաց- քը կ'արտադրէ օրէնք- ներ, որոնք անբաւարար չափով կը քննարկուին եւ Ե. Միութեան չափանիշ- թեան չափանիշներուն ներք լիովին չեն լրացնէր:

«Անշուշտ չենք գիտեր, թէ ատիկա կարելի պիտի ըլլայ՝ թէ ոչ, սակայն ատիկա մեր նպատակն է եւ այդ ուղղութեամբ պի- տի աշխատինք», ըսած է ան:

Թուրք պաշտօնա- տուրներ եւ քաղաքային խմբակներ կ'ընդունին, թէ երկրի երկար ճամ- բայ ունի կտրելիք ներ- դաշնակցութեան համար քա- ղաքական իր գրութիւնը եւ տնտեսութիւնը Եւրո- պական Միութեան չա- փանիշներուն հետ:

ԳԱՀԻՐԷ, 6 (ՌՈՅԹԸՐԸ).- Եգիպտոսի վերադատ գերագոյն ատեանը Չորեքշաբթի օր վեճի վերստին դատել Եգիպտոսի Սատուտտին Իպրա- հիմը, որ Եօթը տարի բանտարկութեան դատապարտը- ւած էր քանի մը ամբաստանութիւններու համար, որոնց կարգին է արաբական երկրի վարկաբեկումը:

Թուրք պաշտօնա- տուրներ եւ քաղաքային խմբակներ կ'ընդունին, թէ երկրի երկար ճամ- բայ ունի կտրելիք ներ- դաշնակցութեան համար քա- ղաքական իր գրութիւնը եւ տնտեսութիւնը Եւրո- պական Միութեան չա- փանիշներուն հետ:

Իպրահիմ կը նկատուի Եգիպտոսի մարդկային եւ քաղաքային իրաւունքներու պաշտպան գործուող ծայ- րեկէն մէկը: Վերադատ ատեանը որոշեց նաեւ, որ Իպրահիմ ազատ պիտի արձակուի մինչեւ նոր դա- տավարութիւնը:

Իպրահիմ բանտարկութեան դատապարտուեց Մայիսին: Ան կ'ամբաստանուէր Եւրոպական Զանճ- նաժողովին կողմէ ապօրինի ֆոնտեր ստացած ըլլա- լու յանցանքով, որպէսզի հսկէ Եգիպտոսի խորհրդա- րանական ընտրութիւններուն: Ան կ'ամբաստանուէր նաեւ Եգիպտոսը վարկաբեկելու յանցանքով՝ իսլամ- ներուն եւ քրիստոնեաներուն կապերուն մասին տեղե- կագիրներ պարտատեղով: Բանտարկութեան վճիռը զարմացուցած էր միջազգային կարծիքն ու մարդկա- յին իրաւանց պաշտպան շարժումները, որոնք ըսին, թէ ամբողջ դատապարտութիւնն ու վճիռը քաղաքական դրդապատճառ ունին:

Թուրք պաշտօնա- տուրներ եւ քաղաքային խմբակներ կ'ընդունին, թէ երկրի երկար ճամ- բայ ունի կտրելիք ներ- դաշնակցութեան համար քա- ղաքական իր գրութիւնը եւ տնտեսութիւնը Եւրո- պական Միութեան չա- փանիշներուն հետ:

Բարեկարգումներու ծրագիր մը, որուն ատենացը մարդկային իրաւանց կապուած օրէնքն է, խորհրդարա- նին կողմէ վաւերացուե- լու գործընթացին մէջ կը

«Անշուշտ չենք գիտեր, թէ ատիկա կարելի պիտի ըլլայ՝ թէ ոչ, սակայն ատիկա մեր նպատակն է եւ այդ ուղղութեամբ պի- տի աշխատինք», ըսած է ան:

Իպրահիմ բանտարկութեան դատապարտուեց Մայիսին: Ան կ'ամբաստանուէր Եւրոպական Զանճ- նաժողովին կողմէ ապօրինի ֆոնտեր ստացած ըլլա- լու յանցանքով, որպէսզի հսկէ Եգիպտոսի խորհրդա- րանական ընտրութիւններուն: Ան կ'ամբաստանուէր նաեւ Եգիպտոսը վարկաբեկելու յանցանքով՝ իսլամ- ներուն եւ քրիստոնեաներուն կապերուն մասին տեղե- կագիրներ պարտատեղով: Բանտարկութեան վճիռը զարմացուցած էր միջազգային կարծիքն ու մարդկա- յին իրաւանց պաշտպան շարժումները, որոնք ըսին, թէ ամբողջ դատապարտութիւնն ու վճիռը քաղաքական դրդապատճառ ունին:

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԷ ՏՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԶԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը



Ձեր ինքնաշարժից պենզին, մագուրին, իւղին, ինչպէս նաեւ լուսալու համար, վճա- րումից հետ միաժամա- ցալ ներկայացուցէք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցու- թիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիր- ներու յաջողութեան:

- FUEL CARDԸ ԿՐՆԱՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԸՏԵՏԵԼԱԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՍԷՂ
- 1. CORAL JAL EL DIB, Ժլ էլ Տիպ
- 2. HYPCO ANTELIAS, Շարաք Ալ Դաուարնէ
- 3. SPEED ANELIAS, Կաթողիկոսարանի դիմաց
- 4. CORAL BAABDAT, Պապատք մայրուղի
- 5. SPEED ACHRAFIEH, Էլ Նաիր PEUGEOT ընկ. առաջ
- 6. HYPCO HAMRA, Պանք Տի Լիպանց առաջ
- 7. MEDCO KARANTINA, Քարանթինայի մայրուղի
- 8. CORAL BHAMOUNT, Դամասկոսի մայրուղի
- 9. CORAL MAR MIKHAEL, Մար Սիխայէլ, Սատա պողոտայ
- 10. SPEED ALITTHAD, Կալեթի Իթթիհատ
- 11. MANAR FANAR, Ֆանար, Նաւոր պանդոկին կից
- 12. CALTEX ANJAR, Այնճար
- 13. BASSIL DORA, Տորայի կամուրջ
- 14. ԱՅԿԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Տորա, «Ալմագա»ի կից
- 15. ԱՄԳՐԻՍԵԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Պուրճ Լամուտ, Սիհ էլ Ֆիլի մայր պողոտայ

ԻՆՉՊԵՍ ՍՍԱՆԱԼ FUEL CARD-Ը

Մագուրի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 քիւերուն:

ՔԱՐՏԸ ԿԸ ՍՍԱՆԱՔ ԶՐԻՕՐԵՆ

ԱՐԺԷՔԱԴՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՇԱՐԾ ՄԸ

ԱՐԻԷԼ ՇԱՐՈՆ ԱՅՍՕՐ ՄՊԻՏԱԿ ՏԱՆ ՍԷՂ...

Շարունակուած Ա. Էջէն

նանջումները կը կատարէ, որովհետեւ քանի մը առա- ջարկներ ունի սրբագրելու համար կացութիւնը: Ան աւելցուց, որ Ե. Միութիւնը գորակից կը կանգնի պաղեստինեան պետութեան, ինչպէս նաեւ՝ պաղես- տինցիներու առաջնորդած ընտրութիւններու կողին, որպէսզի յաղթական իրատեսութիւն ունենայ խա- ղաղութեան բանակցութիւնները առաջնորդելու: Միացեալ Նահանգներ չեն կրնար ընտրութիւններու դէմ ըլլալ, չեն պէտք վետրոն:

որպէսզի Արաֆաթը փոխարինէ ուրիշ անձնաւորու- թիւններով, որոնք կրնան բանակցութիւններ կա- տարել պաղեստինցիներուն անուսով:

Միւս կողմէ, Արաբական Լիգայի ընդհանուր քար- տուղար Ամր Մուսա յայտարարեց, որ Միջին Արե- վելք մտած է ամէնէն գէշ հանգումներ: Ան կոչ ուղ- ղեց Պուշի կառավարութեան չմեկուսացնելու Արա- ֆաթը՝ զայն խաղաղութեան գործընթացին դուրս ձգելով: Մուսա ըսաւ, որ Միացեալ Նահանգներու պարկեղտ ու անկողմնակալ միջնորդի հանգամանքը հարցազանի տակ պիտի աւելուի եթէ Ուաշինգթոնը անտեսէ Արաֆաթը իրեն ղեկավարը պաղեստինցի- ներուն եւ անոնց անուսով բանակցողը: Մուսա աւել- ցուց, որ Արաֆաթը նախագահն է պաղեստինցիներ- ուն եւ այդպէս ալ պիտի մնայ ամբողջ աշխարհին համար:

Պըն էլիպար, որ կը խօսէր Միացեալ Նահանգնե- րու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլըի հետ ունեցած տեսակցութեան աւարտին, ըսաւ, որ Արա- ֆաթի շուրջ գտնուող պատասխանատուները աւելի իրապաշտ են եւ կը գիտակցին Արաֆաթի որդեգրած քաղաքականութեան հետեւանքներուն պաղեստին- ցի ժողովուրդին վրայ: Ըստ Պըն էլիպարի, պաղես- տինցի պատասխանատուները դէմ են Արաֆաթի:

Մուսա դիտել տուաւ նաեւ, որ ճիշդ է Արաֆաթին յաւելուել ճիգի պահանջը՝ տազնապը լուծելու հա- մար, սակայն սխալ է նոյն պահանջը իսրայէլի չներ- կայացնելը, որովհետեւ անիկա ալ հակամարտող կող- մերէն մէկն է:

Պըն էլիպար ըսաւ նաեւ, որ Արաֆաթ կառչած կը մնայ անցեալին, պահանջելով տուել վերադարձը 1948ի գաղթականներուն: Պըն էլիպար դիտել տուաւ, որ այս պահանջը անընդունելի է, որովհետեւ անոր գոր- ծաղութիւնը իսրայէլի վերջը կը նկատուի:

Միջին Արեւելքի տազնապը լուծելու նպատակով յառաջիկայ շաբաթ շրջան պիտի այցելէ Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Ճէք Սթրո, որ տեսակ- ցութիւններ պիտի ունենայ Արաֆաթի եւ Շարոնի հետ: Սթրո ըսաւ, որ իր այցելութեան նպատակը դիւա- նագիտական նուաճումներ կատարել չէ, այլ՝ վատ- թարացած կացութիւնը բարելաւելու ու լարուածու- թիւնը մեղմացնելու փորձ մը:

Իսրայէլացի նախարարը յոյս յայտնեց, որ Արա- ֆաթ փոփոխութեան պիտի ենթարկէ իր կեցողածը եւ բանակցութեանց սեղան վերադառնայ: Իսրայէլացի այլ նախարար մը՝ Ուզի Լանտո դա- տապարտեց Արաֆաթին ու պաղեստինեան իշխանու- թիւնը, դիտել տալով, որ անոնք մաս կը կազմեն «չարիքի առանցք»ին, որ յայտարարուած էր Պուշի կողմէ: Լանտո քննադատեց նաեւ Եգիպտոսը, դիտել տալով, որ անիկա չ'արգիլեք զինեալներու իսրայէլ թափանցումը իր սահմաններէն: Լանտո աւելցուց, որ այս գծով Յորդանան աւելի պարտաճանաչ է ու աւելի խիստ հակողութեան ենթարկած է իսրայէլի հետ սահմանագիծը:

ԻՐԱՆԵԼ ԿԸ ՓՆՏՈՒ ԱՐԱՖԱԹԸ ՓՈՒՍԱՐԻՆՈՂ ՍԸ

ՖԱԹՅԻ գիտնալ թեւը՝ «Արաբայի նահատակներու փա



# Վարդանանց Հերոսամարտի 1551 ամեակ



## ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵՐԳԵՐՈՒ ԸՆԴՄԵՉԷՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

«Նորահաշ պահակաւոր եւ զօրագլուխ առաքինեաց»:

Այս տողերով փառաւորած են մեր մատենագիրները հինգերորդ դարու զօրագլուխ, սպարապետ քաջն Վարդան Մամիկոնեանի յանդգնութիւնը ընդդէմ պարսից մեծաթիւ բանակին: Այնուհետեւ երգերը շարունակած են փոթորկել սրտերը իւրաքանչիւր հայու, որուն ինքնութեան սկիզբը կը բնորոշուի Աւարայրի ճակատամարտով:

Երգերը կարելի էր խաղացած են սերունդներու ազգային գիտակցութիւնը արթնցնելու եւ զարգացնելու աշխատանքին մէջ: Վերաքաղ մը Վարդանանց նուիրուած երգացանկին, արդէն կը համոզուինք, թէ մեր մանկութեան սկսեալ ինչպիսի՜ շերմեռանդութեամբ հետեւած ենք այս մեծ տօնին առթած ցնծութեան, մահով անմահութիւն քանդակելու հրաշքին: Մանկապարտեզի մանուկին շրթներուն վրայ բարբառող ու բոցի պէս բոկող քանի մը բառերը Վարդանի հօգորութիւնը կը վկայեն:

«Հայ եմ ես, Հայ եմ ես, Բաջ Վարդանի թուն եմ ես»...

Մեր մատենագիրներէն ետք, միջնադարու սրբազան գրիչները շարունակեցին փառաբանել «Վասն կրօնքի եւ հայրենիքի» իրենց արիւնը չսակարկած հերոսներու անճնուրաց նուիրումը: Մեր բանաստեղծները հիւսեցին ներքողներ, որոնք վերածուեցան երգերու, իսկ սերունդները հայոց յաջորդական սորվեցան երգերը Տղմուտ գետի փերուն կոռուղ հայ քաջերուն, երգեցին բարձրաձայն հայոց պատմութեան առաջին մեծ խիզախութեան դար փոխանցելով ու զայն հասցնելով մինչեւ 2002 թուականի մեր օրերը:

Այս երգերուն ընդմէջէն նորածաղկ պատանին սորվեցաւ ու կրկնեց՝ «Մահման քաջաց, գէնն իրենանց»... Արեւորուած շնչառութեամբ հասակ առնող սերունդներ հետեւեցան Վարդանանց երգացանկին հնչելի զօրութեան ու երգեցին մարտակոչի հետեւող զինուորին հաստատակամ հաւատքով:

«Վարդան մեր քաջ Զօրավար, Թուրք ձեռին ոսկեկառ»

Կանչում է իւր քաջերին,

Զարդել գլուխն Յագկերտին»:

Երբ կը շարունակուի, բայց արդէն այս չորս տողերուն մէջ կը բացատրուի մարտը նպատակը Վարդանանց հերոսամարտին:

Եկած ու գացած սերունդներ երգեցին շարականի շունչով, թէ ֆետայական խանդավառութեամբ, «Պլպուլն Աւարայրի», «Լոնց ամպերն եկան ծածկեցին երկինքը» եւ «Թէ Հայրենեաց պահակալը Գողթնի քնարք լուել են»...

Երբ սորվեցան աշակերտները հայ վարժարաններու, թէ կան երգեր սրտառուչ, ինչպէս «Շաւարշանայ Հերոսներուն», Արի սերունդն ենք հարազատ», Կամ՝

«Իմ Հայրենեաց Հոգի Վարդան, Հոգիս Հոգուդ եղնի դուրպան»:

Արդէն կը բնորոշուի սրահներ, դասարաններ, ուսուցիչ թէ աշակերտ կը ցնծային երգերուն ներքնայն արեան կշռոյթով, ու մանուկ թէ պարման ծիլերը հայոց կը մկրտուէին Վարդանանց ոգիով, որ կը նշանակէր հայ ապրելու երդում:

Յետոյ «Հիմի՞ էլ լուեմք»...

Վարդանանց միօրեայ ճակատամարտին կամ զիւցագնամարտին ամբողջ դասը կը կայանալ թշնամիին դիմաց լուռ չմնալու կեցւածքին մէջ:

Բոլոր լուսիւնները դաւադրութեան մը թունաւոր խմորը կը շաղկեն: Ու հայը չի կրնար լուր բռնակալներու, ոգեպաններու դիմաց ու կը գոռայ, Կտրե՛ գոռե՛ գոռայ՝ ցանկ ցանկ սրտ «Սուրբ եւ պարանոց մեր»...

Այս է խորհուրդը Վարդանանց պատգամին: Բարձր ճակատով մնալ պատեճէջի վրայ, երգել ամենայն խանդավառութեամբ երգերը Վարդան սպարապետին, նորածններ մկրտել Վարդանի ու անոր զինակիցներուն անունով ու մանուկը չմոռնալ, որ

«Դարերը կ'անցնին, բայց Վարդանը քաջ, Բայց Վարդանը սուրբ կ'երթայ միշտ առաջ»:

Վարդանանցը եղաւ խորհրդակիցը հայ ժողովուրդի անընկճելի կամքին, ապա թէ ոչ չէինք ունենար Սարդարապատ եւ միւս հերոսամարտերը, Արցախ եւ միւս առաքինութիւնները:

Ուրեմն թող յաւետ հնչեն երգերը Վարդանանց, թող զիլ կանչով կրկնեն սերունդները մեր նորածիլ:

«Մենք քաջ Վարդանի սոհմէն ենք, չենք վախի, Մանր մունր փորձանքներին չենք փախի, Թող իմանան մենք չենք դառնալ խաղալիք, Այնպէս պիտ գարնենք, որ յիշէ հօր հարսանիք»...


Հայոց պատմութիւնը եւ հայ երգը կը բալեն թեւեւ ցնուկ: Երգով պատմութիւնը պատմութիւն հայոց, որպէսզի նորոգուած արիւնով շերմանան երակները նոր սերունդին:

### ՀԱՅ ԹԱՏՐՈՒՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՆՃԱՆՕԹ ԷՋԵՐԷՆ

# ՎԱՐԴԱՆԱՆՔԸ ՀԱՅ ԲԵՄԵՐՈՒԻՆ ՎՐԱՅ ԵՒ... ԹՈՒՐԿԻՈՅ ՄԷՉ

Օտար տիրապետութեան դէմ Հայ ժողովուրդին մղած հերոսական պայքարի փայլուն էջերէն մէկն է 451 թուականի Վարդանանց ճակատամարտը, որուն մասին գրած են երկու պատմիչներ՝ Եղիշէ եւ Ղազար Փարպեցի:

Վարդանանցի դէպքին անդրադարձած են նաեւ միջնադարու դրոյշներ Սեբէոս, Թովմա Արծրունի, Կիրակոս Գանձակեցի, Ներսէս Շնորհալի եւ ուրիշներ:



Սմբատ Բիրատի «Աւարայրի արծիւ» քաղերգութեան հայատառ թրքերէն քարգմանութեան առաջին էջը...

Հետագային Վարդանանցը գեղարուեստական գրականութեան նիւթ դարձուցած են Ղեւոնդ Ալիշան, Ռաֆայէլ Պատկանեան, Գարեգին Սրուանձտեանց, Ս. Գնունի Վանեցի, Վ. Ս. Նալպանտեան, Դ. Դեմիրճեան եւ ուրիշներ:

Եղիշէի «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմի» մատենանը գրուած է ճակատամարտէն շուրջ տասնհինգ տարի ետք:

Գ. Սրուանձտեանցի կարծիքով, «Եղիշէ պատմագիրն է Հայոց Համար, անոր մատենանը, որ եւ Աւետարանն է, նոր Աւետարանն է»:

Դարերու ընթացքին Վարդանանցը սրբացուցած մեր ժողովուրդին կողմէ ստեղծուած է հարուստ գրականութիւն: Քաջ Վարդանը դարձած է ազգային առաջին հերոսը, որուն հայ երեխան կը ծանօթանայ մանկութենէն:

19րդ դարու կէսէն սկսեալ գրուած են բազմաթիւ գովերգներ եւ ողբերգութիւններ՝ նուիրուած Վարդանանց հերոսներուն, իսկ 20րդ դարէն սկսեալ՝ թատերգութիւններ, որոնք ներկայացուած են Հայ բեմերէն:

Թրքական թատրոնի մասնազէտ, Անգարայի Համալսարանի դասախօս՝ փրոֆ. Մեթին Անտ 1972-1976 Անգարայի մէջ հրատարակած է «Թուրք թատրոնի պատմութիւնը» քառահատոր ծառայուն հետազոտութիւնը, որ կ'ընդգրկէ թրքական թատրոնին պատմութիւնը 1839էն 1923: Հեղինակը Բ. Հատրոնի մէջ «Վարդանանց» ներկայացումի մասին կ'անդրադառնայ՝ քննելով: «1867ին Ա. Ամատունիի «Վարդան Մամիկոնեան» փիեսի Սվաճեանի բեմադրութեան Պոլսոյ Հայերուն մէջ յառաջացուցած խանդավառութիւնը պատճառ դարձաւ «Արեւելեան թատրոն»ի փակուածին, քաղաքական նկատառումներով»:

Բայց թատերագիրները չդադրեցան գրելէ: Տեղին է յիշել կարգ մը թատերագիրներու գործերը:

1909ին լոյս տեսաւ Սմբատ Բիրատի «Աւարայրի արծիւ» ողբերգութիւնը (Պոլիս): 1911ին հրատարակուեցաւ Տիգրան Մանուկեանի «Վարդան Մամիկոնեան» ողբերգութիւնը (Պոլիս): Հայր Վահան Յովհաննէսեան իր կարգին պատրաստեց «Դեպի Աւարայր» գործը, որ մնաց ձեռագիր վիճակի մէջ (Հայէպ): Յիշեալ թատերագիրներուն գործերէն ամէնէն շատ սիրուած եւ բեմ բարձրացած ողբերգութիւնը կը մնայ Բիրատի «Աւարայրի արծիւ»:

Ո՞վ է Ս. Բիրատը: Քաղաքական-հասարակական գործիչ, խմբագիր, վիպագիր եւ բանաստեղծ Սմբատ

Բիրատ (Տէր Ղազարեան) ծնած է Զէյթուն, 1862 Մարտ 14ին: Ան հեղինակն է «Բուրգերէն» ժողովածուին: Գրած է վէպեր՝ «Վեղարաւոր հերոսը», «Ձէյրունցի վարդապետը», «Բանտէ բանտ», «Երլուր-գէն Սասուն», «Դիակապետներ», «Դեպի Երլուր»:

Բիրատի «Աւարայրի արծիւ» թատերգութիւնը առաջին անգամ ձեռագիր վիճակով կը ներկայացուի Գահիրէի Խտիվական թատրոնին մէջ, 1900ին, Վարդանանց տօնակատարութեան գիշերը, Ֆասուլեան-Պէնյան միացեալ թատերախումբին կողմէ:

Օսմանեան սահմանադրութեան հռչակումէն ետք, 1909ին, Բիրատի այս ողբերգութիւնը առաջին անգամ կը հրատարակուի եւ բեմ կը բարձրանայ Պոլսոյ մէջ՝ անկարգելի խանդավառութիւն ստեղծելով պոլսահայութեան մէջ:

1912ին ներկայացումը մշակուածի ենթակուելով երկրորդ անգամ կը հրատարակուի եւ կը ներկայացուի:


1918ին գործը Հայէպի մէջ առաջին անգամ կը ներկայացուի Չորք Մարգարի Հայրենակցական Միութեան կողմէ, ապա յիտուն անգամ է աւելի կը ներկայացուի մեծ յաջողութեամբ:

1921ի աշնան Հայ Տրամաթիկ Ընկերութեան թատերախումբը, դերուստը Աշոտ Մատթեանի դեկավարութեամբ, ամառնային թատերաշրջան մը կը բոլորէ Սիւնիքի Գրնալը կողմէ (Պոլսոյ մօտակայքը): Խաղացանկին մաս կը կազմէ նաեւ Բիրատի «Աւարայրի արծիւ»:

Հայերէն եւ թրքերէն լեզուներով Դերասանական կազմին մէջ կ'ըլլան նաեւ թուրքեր, օրինակ՝ Վասակի դերով բեմ կը բարձրանայ Ահմէթ Ֆեհիմ Պէյը, որ մօտաւորապէս կէս դար գործակցած է Հայ բեմին հետ եւ բեմ բարձրացած է այդ օրերու գրեթէ բոլոր Հայ կանաւոր դերասաններուն հետ: Ան նոյնիսկ Հայերէն կարգալ - գրել սորված է:

Մեր պրպտումներուն ընթացքին չկողմանք ստուգել «Աւարայրի արծիւ» գործին թրքերէն թարգմանութեան անունը, սակայն պէտք է խոստովանի, որ թարգմանութիւնը եղած է բառարկութեամբ եւ բնագիրին մեծ հաւատարմութեամբ:


Թրքերէնի թարգմանուած «Վարդանանցը», Հայատառ եւ արաբատառ, Մանր



... եւ արաբատառ թրքերէն քարգմանութեան առաջին էջը:

տաթեանի ձեռագիրով կը բազմապատուի Հայ եւ թուրք դերասաններուն Համար եւ թրքերէնով առաջին անգամ բեմ կը բարձրանայ Գրնալը կողմէն մէջ: Տիլին Մարի (Հրանտյ) Ֆէլիկեան կը մարմնաւորէ Վարդան Մամիկոնեանը:

Աշոտ Մատթեան տարիներ ետք այսպէս կը ներկայացնէ Ֆէլիկեան դերասանուհին. «Մարի Ֆէլիկեանի կրակոտ խաղակցութեան Համար Կովկասի մէջ զինք կոչեցին «Հրանտյ», այսինքն՝ կրակէ աղջիկ: Սմբատ Բիրատի «Աւարայրի արծիւ» ներկայաց-



Հրանտյ՝ Վարդան Մամիկոնեանի դերով:

ցումը հակառակ բացօթեայ ներկայացուելուն, չնսեմացուց Հրանտյի կախարհանքը: Անոր ձայնը, դիմախաղը, խաղարկութիւնը անթերի էին եւ գերազանցապէս առինքնող ու հմայիչ, մանաւանդ Աւարայրի դաշտը ձիւր վրայ նստած Մարի Հրանտյ իր բոցաշունչ առողանութեամբ եւ հրեղէն խաղարկութեամբ հմայեց հանդիսատեսը: Մեծ էր Հրանտյ Վարդանի դերով:

Ահմէթ Ֆեհիմ Պէյ «Յիտուն տարի բեմի վրայ» յուշերու գիրքին վերահրատարակութեան 187րդ էջին մէջ, Հրանտյի հմայքը կը նկարագրէ այսպէս. «Ժամանակի դերասանուհիներուն մէջ ան ամէնէն ճաշակաւոր հագնողն էր: Պոլսոյի ներկայացումներուն հագած ամէն մէկ զգեստը շուտով ուշադրութիւն կը գրաւէր եւ կ'անցնէր մոտայի շարքին: Ներկայացումներուն ամէնէն շատ օգտուողները Պոլսոյի վաճառականները եղան: Օրինակ, Հրանտյի նկարները սուրբերու վրայ գետեղելով՝ «Հրանտյ Օտըրլուն», «Հրանտյ թաշկիմակ», «Հրանտյի գուլպաներ» որակելով սուղ գիներով վաճառեցին»:

Թուրք թատերագիր Նազըմ Հիքմէթ, որ բարեկամն էր Հրանտյի աղջկան՝ երգչուհի - դերասանուհի Իրմաթիօ Գեղանոյչին, Պէյրուտ տուած իր մէկ հարցազրոյցին մէջ հայ դերասան - դերասանուհիներու եւ ընթացիկներու թուրք թատրոնին մատուցած ծառայութիւններուն գնահատուած կ'ընէ այս խօսքով. «Եթէ Հայերը չըլլային, մենք թուրքերս չէինք ունենար թատրոն»: Իր ծաւալուն հետազոտութեան Բ. Հատրոնի մէջ Մեթին Անտ խօսելով փոքրամասնութիւններու՝ հրեաներու, հայերու, Ֆրանսահայերու, գերմանացիներու եւ այլ ժողովուրդներու թատերական գործունէութեան մասին, կ'ընէ. «Փոքրամասնութիւններու մէջ, միայն Հայերն էին, որոնք, հայերէնին գուզահեռ, կը ցուցադրէին թրքերէնի փիեսներ, իսկ մնացեալ խումբերը կը ներկայացնէին օտար լեզուներով»:

«Եւրոպական թատրոնը Թուրքիա բերելու ջանքերուն մէջ ամէնէն յառաջող մը հայերը եղան: Մոլիէրի եւ Շէքսպիրի թատերգութիւններուն մտտեղ թրքական թատրոնին՝ իրենց կը պարտինք»: Մեթին Անտ խօսքը շարունակելով կ'ընէ. «Արեւելեան թատրոն»ի նշանաւոր աստղերէն Աղանի եւ Արուսեակ քոյրերը, Պայճառ Փափագեան, բեմադրիչ Թովմա Ֆասուլեանեան եւ ուրիշներ երբ չորս լեզուներով՝ հայերէն, թրքերէն, Ֆրանսերէն եւ յունարէն ներկայացումներ տուին, աննախադէպ երեւոյթ էր առհասարակ որեւէ թատերախումբի համար»:

Թրքերէնով առաջին թատերական ներկայացումները կազմակերպողները եղած են Հայերը, 1850ական թուականներուն: Այսօր թուրքերը անվիճելիօրէն կ'ընդունին այս ճշմարտութիւնը: Մեթի իր հետազոտութիւնները կ'աւարտէ այս խօսքերով. «Թրքերէնով տրուած ներկայացումներով, թուրք թատրոնին նպաստելու անկեղծ ջանքերուն համար Հայ արուեստագէտներուն ինչպիսի շնորհակալութիւն որ յայտնենք, քիչ է»:

Այո՞, թուրք արուեստագէտներուն Հայրերը Հայ արուեստագէտին թրքաւարի շնորհակալութեամբ վարձահատուց եղան՝ փշրելով գանկը եղբարախտ մտաւորական Սմբատ Բիրատին, 1915ի Օղոստոսին, Գանալը Տէրէի մէջ, Անգարա:

# Հրամանատարական

## ԵՏԴԱՐՁ՝ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Կառավարական փոփոխության մասին խոսակցության ախար սկսում են հարձակվել արձանագրել եւ սահմանափակելի՛ գույքահարկի խորհրդարանին մէջ պիտու է նախագիծը քննարկումներուն առիթով յառաջացած քաղաքական հակադրություններուն: Այս երեւոյթը ցայտուն կերպով արտայայտուցեց մանաւանդ վերջին նիստին, որ յատկացուած էր վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ կարգ մը նախարարներու պատասխանները յետուն:

Քաղաքական լաւատեղեակ շրջանակներ կ'ըսեն, որ այս նիստին առնչուած ժամանակահատվածներուն ընթացքին շարունակելու էր, որ նիստը լեցուն էր բանավեճերով եւ ընդմիջումներով, որոնք անպայման երկրի ղեկավարներուն օգտին էին:

Սակայն կառավարական փոփոխության մասին խոսակցություններուն նախնադր չի նշանակեր, որ այդ փոփոխության ուղղուածութիւնը վերջ գտնէ մանաւանդ Մարտի վերջաւորութեան կայանալիք արաբական յառաջիկայ վեճերով չէին ետք:

Քաղաքական աղբիւրներ կ'ըսեն, որ ներկայ կառավարության փորձէն (հակառակ անոր որ կառավարութեան գործունէութեան ընկերացան կարգ մը բացասական երեւոյթներ) կարելի է օգտուել հետագային:

Այդ աղբիւրները հաստատեցին, որ վարչապետ Հարիրի դժգոհ չէ ներկայ կառավարութիւնը փոփոխութեան ենթարկելու հարցի արժարժումէն: Ասոր համար այն անգինքն քննադատողներուն պատասխանեց անոնց ոճով:

Այս քննադատութիւնները քաղաքական խաղի շրջանակներէն դուրս չեն ելել երբեք: այսպէս, կառավարութեան եւ անոր գործելաձեւեր պաշտպանող դիրքերէն մեկնելու փորձերէն, վարչապետը քննադատողներուն դէմ կ'ուրբացաւ այն զինքով, որ անոնք գործածեցին կառավարութեան դէմ:

ՆՈՒՐ ԺԱՄԱԼ

«Անուար» (Յապաւուած)

## ՅԱԻԵԼԵԱԼ ԱՐԺԷՔԻ ՏՈՒՐՔԸ՝ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՆ ՄԷՉ

Յաւելեալ արժէքի տուրքը արդէն սկսաւ կիրարկուել, սակայն այս իրողութեան գէշ կողմերէն մէկը այն է, որ անիկա ճշգրիտ ձեւով չի կիրարկուել եւ առիթ կու տայ շահագործումներու եւ անօրինականութիւններու: Այս տուրքին շուրջ շփոթ մը ստեղծուած է առաջին օրէն եւ տակաւին կը շարունակուի: Այս մէկը պատճառ կ'ըլլայ, որ վաճառականները օգտուին քաղաքացիներուն անգիտութենէն եւ կարելի եղածին չափ տուրքեր աւելցնեն բոլոր արտադրութիւններուն վրայ:

Ծիծաղելի պատկեր մը կը պարզէ յաւելեալ արժէքի տուրքին կիրարկումը Լիբանանի շուկաներուն մէջ: Նոյն արտադրութիւնը մէկ վաճառատան մէջ ենթարկուած է յաւելեալ արժէքի տուրքին, իսկ ճիշդ քովը գտնուող նպարավաճառին քով անկէ գերծ կացուցուած է: Օրինակ՝ հաւր նախկին գինով կը ծախուի Համարի մէջ գտնուող ճաշարանի մը մէջ, իսկ իր քովի «Գրացին» կը ծախուի յաւելեալ արժէքի տուրքով: Պարագան նոյնն է կաթնեղէնին. նպարավաճառը գայն նախկին գինով կը ծախուի, մինչ միւս վաճառատուներուն մէջ 10 առ հարիւր յաւելեալ տուրքով կը ծախուի նոյն արտադրութիւնը:

Այս բոլոր իրարանցումին մէջ «գիններու քաղաքականութեան թեքմիք գրասենեակ»ի գործունէութիւնը «խեղճուկ» վիճակ մը կը պարզէ: Լիբանանեան շուկային մէջ իւրաքանչիւր առեւտրական կ'աշխատի եւ գիններ կը ճշգրէ ըստ իր քաղաքացիներէն: «Հասկացողութեան»: Այս իրավիճակը շտկելու համար արտակարգ միջոցառումներ պէտք է գործադրուին, մանաւանդ՝ սկզբնական այս հանգրուանին, երբ տակաւին տուրքին կիրարկումը բոլորովին չէ յստակացած:

Տնտեսութեան նախարարութեան «գիններու քաղաքականութեան թեքմիք գրասենեակ»էն «Սաֆիր»ին



Քաղաքացին կը ստուգէ իր վճառած տուրքին չափը

յայտնած են, թէ գրասենեակը գանազան բողոքներ ստացած է յաւելեալ արժէքի տուրքին կիրարկման վերաբերող:

Գրասենեակը նշած է, թէ այսօր շուկաներուն մէջ կան 25-30 վերահսկիչներ, որոնք հսկողութիւն կը բանեցնեն, որպէսզի յաւելեալ արժէքի տուրք չըրուի տուրքին ենթակայ չեղող արտադրութիւններուն վրայ: Գրասենեակը աւելցուցած է, թէ անոնց թիւը անբաւարար կը նկատուի: Ան կը նշէ, թէ այս գործընթացին մէջ մեծ դեր ունի նաեւ լիբանանցին, որ անօրինականութիւնները նկատուող պարագային պէտք է տեղեակ պահէ կառավարութեան պաշտօնեաները: Սակայն, միւս կողմէ, պաշտօնեաներու եւ վերահսկիչներու կատարած աշխատանքը անբաւարար է եւ չի կրնար լուծել առկայ շփոթն ու անօրինականութիւնները:

Ելեմուտքի նախարարութեան տուրքերու գրասենեակի տնօրէն տղթ. Շաուքի Համատ ըսած է, թէ կան շահագործումներ եւ անօրինականութեան պարագաներ, սակայն այս գոծով ներկայացուած բողոքներուն լոյսին տակ, պատասխանատուները յաւելեալ քայլերու դիմած են: Երբ նախարարութիւնը տեղեակ ըլլայ անօրինականութեան մասին, կը դիմէ վաճառականին, որպէսզի ճշգրէ իր սխալները: Յաջորդ քայլը կ'ըլլայ այն, որ 88 վերահսկիչներ նշանակուած են, որպէսզի շրջին եւ ստուգեն, թէ ամէն բան ճշգրիտ ձեւով կ'ընթանայ: Ան նշած է, թէ պաշտօնեաներուն թիւը բաւարար է այս գործը գրուի հանելու համար, որովհետեւ տուրքի յատուկ գրասենեակի մօտ արձանագրուած առեւտրականներուն թիւը շուրջ 7250 է:

Կացուցութեան աւելի մօտէն հետեւելու համար «Սաֆիր»ի թղթակիցը շրջեցաւ լիբանանեան շուկաներուն մէջ: Քաղաքացիներուն մեծամասնութիւնը տակաւին կը բողոքէ տիրող իրավիճակէն: Կին մը ըսած է, թէ ինք լսած է, որ շաքարին վրայ ՅԱՏ չէ դրուած, մինչ նպարավաճառին քով ինք շաքարին գինէն աւելի վճարած է իրեն տուրք: Ան ըսած է, թէ արդէն ժողովուրդին վիճակը բաւական գէշ է, թէ՛ էյեկտրականութիւն եւ թէ՛ շուրջ ունենալու համար ժողովուրդը կը վճարէ կառավարութեան եւ անհատներու: Ըստ անոր, նախընտրելի է առաջնահերթ ծառայութիւնները ապահովել ժողովուրդին, ապա տուրքեր գանձել իրենց տուածին փոխարէն:

Ասոր կողքին, կան քաղաքացիներ, որոնք բնական գիտեր այս տուրքին կիրարկումին մասին: Անոնք տեղեակ չեն, թէ ինչ են այն արտադրութիւնները, որոնք վրայ տուրք չէ աւելցած: Այս քաղաքացիները տուրք կը վճարեն, առանց անդադառնալու, թէ իրենք կը շահագործուին:

Իրավիճակը ցաւալի է. իւրաքանչիւր վաճառատուն, նպարավաճառ կամ ճաշարան գիններ որոշած է առանց յստակ օրէնքի եւ կանոնի հետեւելու, իսկ շահագործողները քաղաքացիներն են:

ՖԵԹԸՆ ՔՊԷՅՍԻ

«Սաֆիր» (Յապաւուած)

## ՅԱԻԵԼԵԱԼ ԱՐԺԷՔԻ ՏՈՒՐՔԻՆ ՉԵՆԹԱՐԿՈՒՈՂ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ելեմուտքի նախարարութիւնը հրապարակեց յայտարարութիւն մը, որուն մէջ նշեց, թէ հաստատած է կեդրոն մը, որ կ'ընդունի քաղաքացիներուն բողոքները յաւելեալ արժէքի տուրքին վերաբերող: Նախարարութիւնը նաեւ հրապարակեց ցանկ այն առարկաներուն եւ արտադրութիւններուն, որոնք ենթակայ չեն յաւելեալ արժէքի տուրքին:

Այդ ցանկը կ'ընդգրկէ հետեւեալները՝

- 1.- Ողջ կողբեր, խոզեր, ոչխարներ, այծեր, հաւեր, բազրեր, հնդկահաւեր, ինչպէս նաեւ՝ ձուկեր:
- 2.- Ցանուած սննդանիւթեր, որոնք կը վաճառուին իրենց բնական վիճակին մէջ, ինչպէս՝ բանջարեղէնները, պտուղները, ընդեղէնները, հաւկիթը եւ մեղրը:
- 3.- Հացը, որ կը բաղուի անյարմար, ջուրէ, աղէ եւ թթմամբի եւ անոր մէջ չկան այլ բաղադրիչներ, ինչպէս՝ իւղ, կաթ, շաքար կամ չոր պտուղներ: Այսպիսով յաւելեալ արժէքի տուրք ենթակայ չեն պարզ հացը, լաւաշը եւ եւրոպական հացերը:
- 4.- Ալիւրը եւ այդ ընտանիքի պատկանող սննդեղէնները:
- 5.- Ամէն տեսակի մսեղէններ, ձկնեղէններ եւ հաւերը, ըլլան անոնք թարմ, սառած թէ պահածոյ: Ասոնց մաս չեն կազմեր եփած եւ ուտելու պատրաստ միսերը եւ ձուկերը:
- 6.- Կաթը, կաթնեղէնները եւ այս ընտանիքի պատկանող արտադրութիւնները: Կան նաեւ պանիրներ, մածուցի, կաթնի պատրաստուած կարգանքեր: Ասոնց մաս չեն կազմեր այն կաթերը եւ մածուցաները, որոնք մէջ աւելցած է շաքար կամ պտուղի հիւթ:
- 7.- Բրինձը՝ իր բոլոր տեսակներով:
- 8.- Ձաւարը՝ իր ենթատեսակներով:
- 9.- Շաքարեղէնք եւ ճակնդեղի պատրաստուած շաքարը:
- 10.- Սեղանի աղը:
- 11.- Բուսական ձէթը եւ անոր տեսակները:
- 12.- Դոմաճը եւ այս ընտանիքի մաս կազմող բոլոր չոր խմորեղէնները, պայմանաւ որ անոնք եփած եւ այլ ուտելիքներու հետ պատրաստուած չըլլան:
- 13.- Մանուկներուն յատուկ սննդեղէնները եւ ուտելիքները: Այս բաժինը կ'ընդգրկէ յատկապէս մանուկներուն համար պատրաստուած սննդեղէնները:
- 14.- Տպագրուած գիրքերը եւ նմանօրինակ արտադրութիւնները: Այս բաժինին մաս կը կազմեն գիրքով եւ նկարներով լրջ տեսնող այն հատորները, որոնց վրայ յիշուած է հեղինակին անունը, հրատարակչատունը, անոր հասցէն եւ տպագրութեան թուականը: Այս գիրքերուն բովանդակութիւնը հիմնական չէ, կրնայ ըլլալ դաստիարակչական, կրթական, եւ այլն, յատկապէս՝ կրօնական եւ երաժշտական գիրքեր, մանուկներուն յատկացուած գրքակները: Յաւելեալ արժէքի տուրք կը դրուի ծանուցումներու յատուկ հրատարակութիւններուն վրայ:

մեր եփած եւ ուտելու պատրաստ միսերը եւ ձուկերը:

- 6.- Կաթը, կաթնեղէնները եւ այս ընտանիքի պատկանող արտադրութիւնները: Կան նաեւ պանիրներ, մածուցի, կաթնի պատրաստուած կարգանքեր: Ասոնց մաս չեն կազմեր այն կաթերը եւ մածուցաները, որոնք մէջ աւելցած է շաքար կամ պտուղի հիւթ:
- 7.- Բրինձը՝ իր բոլոր տեսակներով:
- 8.- Ձաւարը՝ իր ենթատեսակներով:
- 9.- Շաքարեղէնք եւ ճակնդեղի պատրաստուած շաքարը:
- 10.- Սեղանի աղը:
- 11.- Բուսական ձէթը եւ անոր տեսակները:
- 12.- Դոմաճը եւ այս ընտանիքի մաս կազմող բոլոր չոր խմորեղէնները, պայմանաւ որ անոնք եփած եւ այլ ուտելիքներու հետ պատրաստուած չըլլան:
- 13.- Մանուկներուն յատուկ սննդեղէնները եւ ուտելիքները: Այս բաժինը կ'ընդգրկէ յատկապէս մանուկներուն համար պատրաստուած սննդեղէնները:
- 14.- Տպագրուած գիրքերը եւ նմանօրինակ արտադրութիւնները: Այս բաժինին մաս կը կազմեն գիրքով եւ նկարներով լրջ տեսնող այն հատորները, որոնց վրայ յիշուած է հեղինակին անունը, հրատարակչատունը, անոր հասցէն եւ տպագրութեան թուականը: Այս գիրքերուն բովանդակութիւնը հիմնական չէ, կրնայ ըլլալ դաստիարակչական, կրթական, եւ այլն, յատկապէս՝ կրօնական եւ երաժշտական գիրքեր, մանուկներուն յատկացուած գրքակները: Յաւելեալ արժէքի տուրք կը դրուի ծանուցումներու յատուկ հրատարակութիւններուն վրայ:



Յաւելեալ արժէքի տուրքին ենթակայ չեն այն թերթերը կամ ամսագրերը, որոնք յստակ անունով հետեւողականորէն լոյս կը տեսնեն: Այս տուրքէն ազատ կը կացուցուին նաեւ տպագրութեան եւ գիրքի հրատարակութեան վերաբերող կեդրոններուն աշխատանքները:

- 15.- Թուղթերը եւ խաւաքարները, որոնք կը գործածուին տպագրութեան, ինչպէս նաեւ թերթի հրատարակութեան համար օգտագործուող թուղթերը եւ մեկաները:
- 16.- Դրոշմաթուղթերը:
- 17.- Տնային օգտագործման յատուկ կազմ:
- 18.- Ցանքի յատուկ հուաները, հողագործութեան եւ ցանելու համար անհրաժեշտ առարկաներ, դեղերը եւ հիմնական սերմերը: Անասուններուն եւ կենդանիներուն յատուկ բնական ուտելիքները, բացի անոնցմէ, որոնք յատուկ են տնային շուններու, կատուններուն եւ այլ կենդանիներուն:
- 19.- Հողագործութեան յատուկ առարկաները եւ սարքերը:
- 20.- Դեղագործութեան առնչուող սարքերը, դեղերը եւ առողջապահութեան վերաբերող արտադրութիւնները, ինչպէս՝ յղուելիք արդիւնքներու յատուկ հրատարակութիւններուն վրայ:

Յաւելեալ արժէքի տուրքին ենթակայ չեն այն թերթերը կամ ամսագրերը, որոնք յստակ անունով հետեւողականորէն լոյս կը տեսնեն: Այս տուրքէն ազատ կը կացուցուին նաեւ տպագրութեան եւ գիրքի հրատարակութեան վերաբերող կեդրոններուն աշխատանքները:

- 21.- Թանկարժէք բերել, ազամանդը, ոսկին, արծաթը եւ այլն:
- 22.- Մետաղեայ եւ թուղթէ գրամները:
- 23.- Նաւերը եւ այդ ընտանիքի պատկանող փոխադրամիջոցները՝ ըլլան անոնք պտոյտի կամ մարզական:
- 24.- Մարդոց եւ առարկաներու յատուկ օդային ճամբորդութեան յատուկ փոխադրամիջոցները:

Նախարարութիւնը քաղաքացիներուն կը յայտնէ, թէ ՅԱՏ պէտք է վճարեն հետեւեալ հիմնական պայմաններուն առկայութեան պարագային.

- 1.- Հաստատութիւնը արձանագրութեան թիւ մը կամ փաստաթուղթ մը պէտք է ունենայ, որպէսզի ապացուցէ, թէ ինք արձանագրուած է տուրքերու կառավարական կեդրոնին մօտ:
- 2.- Ցանկ մը պահանջել, որուն մէջ նշուած է հաստատութեան արձանագրութեան թիւը տուրքերու կառավարական կեդրոնին մէջ, եւ որուն կցուած ըլլայ ցանկը այն առարկաներուն, որոնք ենթակայ են ՅԱՏին:
- 3.- Վստահ ըլլալ, թէ ՅԱՏէն ազատ կացուցուած արտադրութիւններուն վրայ այդ տուրքը չէ աւելցուած:

«ՍԱՖԻՐ»

### ՍՐԲՈՑ ՎԱՐԳԱՆԱՆՑ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՉ

Այսօր՝ Հինգշաբթի, 7 Փետրուար 2002ին, Սրբոց Վարդանանց Չորավարաց Եկեղեցական ու Ազգային Տօնին առիթով, Սուրբ Եւ Անմահ պատարագ պիտի մատուցուի Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:

Պիտի պատարագէ եւ քարոյզ ԳԵՐՇ. Տ. ՏԻՐԱՅՐ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ Եկեղեցական արարողութեան պիտի հանդիսապետէ

**Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Պատարագի աւարտին, վեհարանի դահլիճին մէջ վեհափառ հայրապետը պիտի ընդունի դպրեվանքի սաները եւ հաւատացեալ ժողովուրդը:

Սիրով կը հրաւիրուին մեր ժողովուրդի պաւակները՝ մասնակից դառնալու Սուրբ պատարագին եւ գօտեպնդուելու Վարդանանց ու Դեռնդեանց նահատակութեան եկող հաւատքով ու հայրենասիրական ոգիով:

ԳԻԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

### ԼՕՍԻ «Ա. ՊՈՒԼՂՈՒՐՃԵԱՆ» ԸՆԿԵՐԱԲՇՇԿԱԿԱՆ ԿԵԳՐՈՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԼՕՍԻ «Ա. Պուլղուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի ընկերային գրասենեակը կապակերպած է անվար դասընթաց մը, բոլոր այն հայուհիներուն համար (21 - 35 տարեկան), որոնք առիթ չեն ունեցած դպրոց յաճախելու եւ կամ կանխաբանութեան դասընթացներու, որոնք առիթ չեն ունեցած դպրոց յաճախելու եւ կամ կանխաբանութեան դասընթացներու, ինչպէս նաեւ պանապան օգտաշատ գիտելիքներու:

Այս ծրագրին հիմնական նպատակն է ինքնաբար դարձնել հայ կինը, որպէսզի օգտակար հանդիսանայ ինքզինքին եւ իր ընտանիքին:

Յաւելեալ մանրամասնութեանց եւ արձանագրութեանց համար, հետաքրքրուողները պարտին անձամբ ներկայանալ ԼՕՍԻ Ա.Պ.Ը.Բ. կեդրոնի ընկերային գրասենեակ, Ա. յարկ, ամէն օր ժամը 9:00էն 1:00:

«ՍԱՖԻՐ»



# Կնոջական

## ՆՆՈՒՆՆԵՐ ԶԱՐԿՆԵՐԻ ՓՈՒԽԱԴՐԱՆՔՆԵՐ

### ՀԱՐՑԵՐ ԵՒ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ



**●ԿԸ ԶԱՆՁՐԱՆԱՄ ՏՈՒՆԸ ԶԱՒԱԿՆԵՐՈՒՄ ՀԵՏ**  
Շատ մը մայրեր կ'որոշեն գործի դադարիլ եւ տունը մնալ իրենց գաւակները մեծցնելու համար: Բայց ժամանակ մը ետք անոնք կը զոյժան իրենց տուած որոշումին համար, կը ձանձրանան տունը եւ չեն գիտեր ի՞նչ ընել...

Փորձառուներու կարծիքով, վերոյիշեալ մայրերէն շատեր գոհերն են ընկերութեան կողմէ գծուած-ձեւուած չափանիւններուն կամ մեծերու խրատներուն:

Բայց երբեք ուշ չէ որոշումը վերատեսուածեան ենթարկելու համար, իսկ եթէ գործի կարելիութիւններ չկան, կարելի է այլ մարզերէ ներս գրադումներ գտնել՝ անդամակցելով միութիւններու, ակումբներու կամ բարեսիրական կազմակերպութիւններու: Երբեք սոսկ թէ՛ երեսնամեակէն շատ երկար ժամանակով չեն բացակայիր եւ թէ՛ օգտակար գործ մը կատարելու գոհունակութիւնը կ'ունենան:

### ●ՇՈՒՆՉ ԿԸ ՔԱՇԵՄ, ԵՐԲ ԶԱՒԱԿՆԵՐՍ ՔԱՆԻ ՄԸ ՕՐՈՎ ԿԸ ԲԱՅԱՎԱԶՅՐ ՏՈՒՆԸ

Շատ մը մայրեր շարժմը անալ կը հիւանդանան, կը տագնապին եւ նոյնիսկ կու լան, որովհետեւ իրենց գաւակը բանակումի կամ յոյժի պիտի երթայ եւ քանի մը օրով պիտի բացակայի տունէն: Քիչ են այն մայրերը, որոնք կը հրճուին իրենց գաւակներուն մեկնումով:

Փորձառուներու կարծիքով, յաճախ երեսները իրենց զիրենք աշխարհի կեդրոնը կը նկատեն եւ զրեթէ վստահ են, որ իրենց մայրը շատ պիտի տառապի այն բացակայութենէն:

Թելադրելի է, որ մայր մը փայտաղէմ ճամբէ իր գաւակը՝ անոր հասկցնելով, որ եթէ ան գուարճանալու կ'երթայ, ինք այլ իր կարգին այլազան գրադումներուն եւ վերադարձին շատ մը պատմելիքներ պիտի ունենան իրարու: Այս ձեւը լաւագոյն է երկու կողմերուն համար:

### ●ԹՈՒՆԵՐՍ ՍԽԱՆ ԶԵՒՈՎ ԳԱՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ...

Յաճախ մեծ հայրեր եւ մեծ մայրեր կը դժգոհին իրենց թոռներուն դաստիարակութենէն, նիստ ու կացին, եւ այլն:

Չաւակի դաստիարակութիւնը դիւրին չէ, անոնք ալ դիմագրաւած են նոյն դժուարութիւնները, բայց մասամբ մոռցած, եւ այսօր յանգաւոր կը գտնեն իրենց զղջիկը կամ հարսը, փեսան կամ տղան:

Փորձառուներու կարծիքով, երեսներու ներկայութեան պէտք չէ քննադատել ծնողները՝ ըսելով, թէ անոնք ճիշդ ձեւով դաստիարակած չեն զիրենք:

Մեծ մայրերն ու մեծ հայրերը թող աւելի թելադրեն, առաջարկեն, խնդրեն, քան թոռներուն սխալները մատնանշեն, այսպէսով յոյս մը կայ գտնող սրբազրելու, իսկ այլապէս երբեք:

## ԲՈՅՍԵՐՈՒ ԱՃԽԱՐԸՆ

### Ի՞ՆՉՊԻՍ ՓՈՒԽԱԴՐԵԼ ԲՈՅՍԵՐԸ



Լինք տրուած ցուցմունքներուն:

Բոյսերը տունէ տուն, քաղաքէն դիւր փոխադրելի դիւրին չէ. անոնք ճամբորդութեան ընթացքին պէտք ունին մասնաւոր խնամքի եւ յատուկ հագուստի, որ պէտք ուղղաւորող հասնին իրենց տեղը: Հետեւեալը հետեւեալը:

#### ՆՈՐ ՄԻՋԱՎԱՅՐ - ՆՈՐ ԿԵԱՆՔ

Տեղափոխութեան ենթարկուած բոյսերը պէտք է ընտելանան իրենց նոր միջավայրին: Լուսաւորումը, ջերմաստիճանի ելեւէջները, չոր կամ խոնակ մթնոլորտը, այս բոլորը



կը խանդարեն անոր կեանքը:

Այս տուեալներէն մեկնելով՝ մէկէն երկու շաբաթ գտնող գետեղեցէք շուք տեղ մը, շատ քիչ ջուր տուէք, ապա քիչ-քիչ փոխեցէք անոնց տեղը եւ աւելցուցէք ջուրի քանակը: Սկիզբը նաեւ հրաժարեցէք պարտաւորուցիչ տալէ: Կարճ ժամանակ մը ետք անոնք ընտելացած պիտի ըլլան նոր միջավայրին:

#### ԽՈՇՈՐ ՏԵՐԵՒՈՎ ՄԵՃ ԲՈՅՍԵՐԸ

Բոլոր խոշոր բոյսերը տեղափոխութեան ժամանակ պէտք է որ փաթեթը լին ցայլուն տոպրակի մէջ:

Թաղարը իջեցնել տոպրակին մէջ (նկար 1), ապա զգուշութեամբ ամփոփել տերեւները՝ վերի բաժինները ազատ ձգելով: Տոպրակը ամրացնել թափանցիկ փակցնելիքով մը:

#### ՓՈՔՐ ԲՈՅՍԵՐԸ

Փոքր բոյսերը, ծաղկամանները եւ քաթիւները իրենց թաղարներով միասին մէկիկ - մէկիկ փաթեթել թերթերու մէջ եւ քով - քով տեղադրել խաւաքարէ տուփի մը մէջ: Որպէսզի փոխադրութեան ատեն չչարժին եւ չզառնան, անոնց միջեւ ճամբկուած թերթեր թխմեցէք (նկար 2):

#### ՓՇՈՏ ԲՈՅՍԵՐԸ

Քաթիւները խորունկ արմատ չունին եւ, հետեւեալը, նուազապէս ճնշումէ կրնան արմատախիլ ըլլալ:

Որպէսզի նախ դուք չվնասուիք անոնց փուշերէն եւ ապա անոնք ապահով տեղ հասնին, զգուշութեամբ փաթեթեցէք «օդի պղպղկներով» օժտուած ցայլունով, ինչպէս թիւ 3 նկարը ցոյց կու տայ:

#### ԽՈՆԱՒՈՒԹԵԱՆ ԱՆՎՐԱԾԵՏՈՒԹԻՒՆԸ


Մղկոզ բոյսերը թէեւ փոքր, բայց դիւրաբեկ են, ինչպէս՝ պեկոնիան, ազալէն, եւ այլն: Ասոնք խոնաւութեան պէտք ունին, քանի որ շուտ կը չորանան:

Փոխադրութեան ժամանակ նախ անոնց թաղարը փաթեթել ցայլուն տոպրակի մէջ, ապա ամբողջութիւնը՝ օրաթերթով եւ, վերջապէս, փաթեթուած բոյսերը կրկին տեղադրել ցայլուն տոպրակի մը մէջ (նկար 4):



## ԽՈՆԱԳԻՐ

### ՄՐՏԱՁԵՒ ԹԱՐԹ



Այսօրուան սիւնակով, խոհագիրի բացատրութեան և Եւրոպայի, ներկայացման ձեւին պիտի անդրադառնանք: Շատեր կը փափաքին Սէն Վալանթինի առիթով տունը կարկանդակ մը պատրաստել իրենց սիրած անձին համար, մանաւանդ որ այս օրերուն շուկայինը անմատչելի դարձած է:

Խմորին համար կրնանք գնել փաթ սպայլէ կամ փաթ ֆեյոլթէ պատրաստ խմորը:

Խմորին վրայ կրնանք տարածել քրեմ փաթիսիէր կամ քրեմ շաքերտ սերը:

Իսկ երեսը գարդարելու յարմարագոյն պտուղը անշուշտ ելակն է:

Խմորը սրտածե կտրելու համար նախ խաւաքարտի մը վրայ գծեցէք եւ կտրեցէք, ապա խմորին վրայ փոխադրեցէք ու ձեւաւորեցէք:

**ESTHETIK EXPO**  
Vous invite cordialement à l'inauguration de son

**4ème CONGRES ET EXPOSITION D'ESTHÉTIQUE ET DES SOINS DU CORPS**

le Jeudi 7 Février 2002 à 17h.,  
au Palais de l'UNESCO - Beyrouth.

L'exposition et les conférences auront lieu  
les 8 et 9 Février de 15 à 21h., le 10 Février de 11h. à 19h.

Ouvert aux Professionnels et au Public

## ՉԱԲԹՈՒԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆԸ

### ԵՐԳ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Թէ հայրենեաց պատկառիչ  
Գողթնի քնարք լո՛ւր ես.  
Երկնից թող գան անմահ հոգիք  
Հայոց քաջեր պատկեր:

Մասեաց գագաթ թող գան բազմին  
Երկնից գունդ - գունդ հրեշտակներ,  
Աստուած իջեր ի Հայաստանի  
Հայոց արին հոտոտել:

Փախէք ամպեր Շաւարշանէն,  
Այ մի՛ ցողէք ձեր ցողեր.  
Շաւարշանը ռոտուած է  
Հայոց քաջաց արինով:

Եւ կը ծիին ու կը ծաղկին  
Այն դաշտին մէջ ոչ խոտ, վարդ.  
Այլ վարդանայ ինկած երկիր  
Պիտի ծաղկի սուրբ հաւատ:

Ո՛հ, վարդանայ անուան արժան  
Մասիս կանգնի մահաբաժան.  
Մենաստաններ, իսաչն ի գմբէթ,  
Աւետարան սուրբ տաճար:

ԳԱՐԵԳԻՆ ՎՐԳ. ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՑ

## ՇԱՅՈՒՄՆԵՐ

### ԱԼՎԱՐԴ ՊԵՏՐՈՍԵԱՆ



Հայկ խաչատրեանի  
«Հայուհիներ» գրքով  
այս էջով կը ներկայացնենք  
Ալվարդ Պետրոսեանը:

Արձակագիր, հրատարակագիր եւ ազգային-մշակութային գործիչ Ալվարդ Պետրոսեան ծնած է 1946ին, Երեւան:

1968ին ան աւարտած է Երեւանի Պետական համալսարանի բանասիրական բաժանմունքի հայոց լեզուի եւ գրականութեան ճիւղը:

1975-1978 մաս կազմած է «Հայաստանի Աշխատաւորուհի» ամսագրի խմբագրական կազմին: Աւելի ուշ աշխատած է «Սովետական Գրականութիւն» (այժմ «Նոր») հանդէսի խմբագրութեան մէջ:


Ա. Պետրոսեանի առաջին գործը՝ «Երեւանեաց մանրանկարներ» տպուած է «Գարուն» ամսագրի մէջ, 1968ին: Անոր առաջին գիրքը՝ «Երկրի Պայտերը» 1978ին արժանացած է «Լաւագոյն առաջին գիրք» մրցանակին:

Գրագիտուհիին «Մեծախօսութիւն մոլեգնութեամբ» պատմուածքը Հայաստանի Գրողներու Միութեան եւ «Գարուն» ամսագրի 1978ին կազմակերպած մրցանակաբաշխութեան շահած է առաջին մրցանակը:

Ա. Պետրոսեան գրած է նաեւ թատերգութիւններ՝ «Ընկերական դատ», «Հեքիաթ» եւ «Սկիզբ»:

Ա. Պետրոսեան հիմնադրած է 1991-1994 հրատարակած է «Առաջատար» կնոջական շաբաթագրքը: Ներկայիս Ալվարդ Պետրոսեան Հայ Օգնութեան Միութեան կեդրոնական վարչութեան անդամ է:

## Պատրաստե՛ք ՉՈՒՆԻԿ ՍԱՒԻԱԳԱԼԵԱՆ



ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՅՈՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆԸ (ՀԵՀՈՄ)

Սիրով կը հրաւիրե՛ք բոլոր հայ համալսարանականները  
ՀԱՆԴԻՊՈՒՄ-ԶՐՈՅՅԻ ՄԸ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՇԵՏ**

Տեղի կ'ունենայ Կիրակի, 10 Փետրուար 2002ին, կաթողիկոսարանի վեհարանին մէջ, ժամը 11:30ին, Մայրավանք Անթիլիաս: **ԾԱՆՕԹ.** Հայ համալսարանական ուսանողներն այս հանդիպումին հրաւիրուած են նաեւ հայկական վարժարաններու 12րդ դասարանի ուսանող ուսանողուհիները:

## «ԱԶԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»-ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազ օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ՓԱՄԱՐ 5:00:

ՄԱՀԱՋԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի միւլտի մը զիջեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

**ԼՕԻԻ «ԱՂԱԿԻ ՓՈՓՈՂԱՆ» ՄԱՍՆԱՃԻՂ**

**ՃԱՇԻ ԵՒ ԱՆՈՒՇԵՂԵՆԻ ՊԱԶԱՐ**

Տեղի կ'ունենայ, Շաբաթ, 9 Փետրուար 2002ին կէսօրէ առաջ ժամը 9:30էն սկսեալ Զալբայի «Գարեգին Նօդե» ակումբին մէջ:

**ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**ԿՈՒՉՈՒԻ**  
●Վաճառող շրջուն ներկայացուցիչ մը, ինքնաշարժ ունենալը պայման, ամսական եւ շահաբաժին: Դիմել՝ հեռ. 03 - 349300:

**ՍԱՆՈՒ ԾԵՆԵ**  
●2 յարկանի շէնք մը Փոլիկարպոսի շրջան: Հեռ. 01 - 242876 առաւօտեան ժամը 8:00էն մինչեւ երեկոյեան 5:00:

**ԿՈՒՉՈՒԻ**  
●Քարտուղարուհի մը, անգլերէն գիտնալը եւ համակարգիչ գործածելը պայման: Դիմել՝ հեռ. 03-884435:

**ՍԱՆՈՒ ԽԱՆՈՒԹ**  
●Անթիլիաս, «Սիմֆոնի» շէնք, 60 քառ. մետր տարածութիւն, օժտուած արհիթագէ 60 ամկեր ելեկտրական սարքերով: Յարմար գին: Հեռ. 03-310203:

**ՍԱՆՈՒ ԾԱՆՈՒ ԶԱՐԿԱՐԱԺԻՆ**  
●150 մ. ք. Տրպայայի շրջան: Գին՝ 39,000 տոլար կանխիկ: Հեռ. 03-605543:





### ՔԱԿ ԿԸ ԾՐԱԳՐԷ ՓՈՒՅԵԼ ԻՐ ԱՆՈՒՆԸ

Քիւրտ անջատողական ղեկավարներ Երեքշաբթի օր յայտնած են, թէ Մ. Նահանգներու մէջ Սեպտեմբեր 11ի յարձակումները պիտի մղած են հրաժարելու իրենց իմքակիր անունէն՝ ցոյց տալու համար, որ քաղաքական միջոցներով փոփոխութիւններ կը հետապնդեն:

Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութիւնը (ՔԱԿ), որուն ղեկավարը՝ Ապտիլլա Օճալան, 1999ին ձերբակալուած էր եւ դաւաճանութեան յանցանքով անոր դէմ մահապատժիտ արձակուած էր, յայտնած է, թէ կը ծրագրէ յառաջիկայ քանի մը օրերուն կուսակցութեան մէջ համագումարին ընթացքին իր անունը փոխել:

Հիւսիսային Իրաք հաստատուած ընթացող ղեկավարները քրտական «Միտիա թի. Վի» կայանին ձամբով սփռուած յայտարարութեան մը մէջ ըսած են, որ Սեպտեմբեր 11ի յարձակումներէն ետք «միջազգային նոր լուծումներ անհրաժեշտ են: Ամբողջ աշխարհը եւ յատկապէս Միջին Արեւելքը փոխուած են», ըսած են անոնք:

Թուրքիա ՔԱԿի պիւնեայները «ահաբեկիչներ» կը նկատէ, սակայն անկախ չէ կրցած համոզել Ե. Միութիւնը, որ անոր անունը մաս կազմէ ցանկին այն կազմակերպութիւններուն, զորս Ե. Միութիւնը ահաբեկչական կը նկատէ:

ՔԱԿի մօտիկ աղբիւրներ յայտնած են, թէ փոխընդարար անուններու կարգին են ժողովրդավարական Հանրապետութեան Կուսակցութիւն կամ Քիւրտիստանի Ապտուրեան Կուսակցութիւն:

Սակայն ղեկավարները յայտնած են նաեւ, որ կրնան դարձան վէպի դիմել, եթէ իրենց մշակութային պահանջները չտրուին:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ՏԸՆԵՒԻ ՄԷՋ

## ՄԻԱՅԵԱԼ ՆԱՇԱՆՈՒՆԵՐ - ՌՈՒՍԻԱ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱՔԻ ԴԵՄ ԱՍՏԱՏՈՒՄԸ ՄԱԿԻ ՊԱՏՄԱՍԻՋՈՅՆԵՐՈՒՆ ԳԵՈՎ

Միացեալ Նահանգներ եւ Ռուսիա երկ երկօրեայ բանակցութիւններու սկսած ժրմէի մէջ, վերատեսուծեան ենթարկելու համար Իրաքի դէմ հաստատուած ՄԱԿի պատժամիջոցները: Ամերիկացի եւ ռուս պատուիրակները պիտի փորձեն համաձայնութիւն մը գոյացնել ներածումներու ցանկի մը մասին, որուն մէջ նշուած արտադրութիւնները Իրաքի կողմէ կրնան ներածուիլ առանց սպասելու Ապահովութեան խորհուրդի պատժամիջոցներու յանձնարարման հաւանութեան:

Ժրմէի հանդիպումը տեղի կ'ունենայ այն պահուն, երբ Իրաք դիւանագիտական լայն արշաւի մը ձեռնարկած է դուրս գալու համար մեկուսացում: Իրաք մինչեւ իսկ առաջարկած է առանց նախապայմաններու բանակցութիւններ կատարել ՄԱԿի ընդհանուր

քարտուղար Բոֆի Անանի հետ:

Ուաշինկթըն մտահոգ, որ Իրաքի նախաձեռնութիւնները կրնան միջազգային պարակցութիւն ապահովել պատժամիջոցները չնջելու պահանջին, կ'առաջարկէ «խելացի» պատժամիջոցներու ծրագիր մը, որուն նպատակն է մեղմացնել Իրաքի ժողովուրդին տառապանքը: Առաջարկը ապահոված է Ապահովութեան խորհուրդի հաւանութիւնը, սակայն գործադրութեան դրուելի առաջ, Ռուսիա եւ Միացեալ Նահանգներ պետք է համաձայնին առանց վաւերացումի ներածուելիք արտադրութիւններու ցանկի մը մասին:

Պաղտատ, սակայն, համաձայն չէ եւ կը պահանջէ ամբողջութեամբ չնջել պատժամիջոցները: Պաղտատ կոչ ուղղեց Մոսկուայի դէմ դնելու ու մերժելու Ուաշինկթընի

ծրագիրը: Պաղտատ կը պնդէ նաեւ, որ հաւաքական քանդումի պէտքեր չունի, ինչպէս կը փորձէ պրպարտել Ուաշինկթընը: Պաղտատ կ'ըսէ նաեւ, որ Ուաշինկթըն այս ամբաստանութիւնները կ'ընէ, որպէսզի աշխարհին ուշադրութիւնը չկեդրոնանայ կորիպային պէտքերու պահեստ ունեցող Իսրայէլի վրայ:

Իրաք կը մերժէ նաեւ ՄԱԿի պէնքի քննիչներուն վերադարձը եւ այդ հարցին մասին առաջարկած է բանակցութիւններ կատարել Անանի հետ:

Ուաշինկթընի հակադարձեց Իրաքի այս առաջարկին, դիտել տալով, որ ՄԱԿի հետ բանակցութիւնները պետք է ըլլան արագ ու կտրուկ: Ուաշինկթըն ըսաւ նաեւ, որ քննիչները Իրաք պետք է վերադառնան Ապահովութեան խորհուրդի որոշումներու հիման վրայ:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ՃՐԱՆՍԱ ԽՍՏԻ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ՌԱՇԻՆԿԹԸՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՓԱՐԻՋ, 6 (ՌՈՅԹԸՐԸ).- Ճրանսայի արտաքին գործոց նախարար Բուպի Վեռին Զորքարթի օր ահաբեկչութեան դէմ պատերազմին հանդէպ Ուաշինկթընի «պարզամիտ» մօտեցումին դէմ յարձակողականի մը ձեռնարկած է:

Ան ձայնասփռուի «Յրանս էնթեր» կայանին յայտնած է, թէ Ճրանսա ըստ իրեն Մ. Նահանգներու եւ ամերիկացի ժողովուրդին հետ եւ «այդպէս պիտի մնան»:

«Սակայն այսօր մեզի կը սպառնայ նոր պարզամտութիւնը, որ կը կայանայ ամէն ինչ ահաբեկչութեան դէմ պատերազմի վերածելու մէջ»:

Րազմի վերածելու մէջ, ըսած է ան:

«Ատիկա իրենց մօտեցումն է, սակայն չենք կրնար այդ գաղափարը ընդունիլ: Պէտք է լուծել արմատաւ հանդիսացող պատճառները, վիճակները, աղքատութիւնը, անարդարութիւնը», յայտնած է Վեռինը:

Ան քննադատած է նաեւ Իսրայէլի հանդէպ ամերիկեան զօրակցութիւնը՝ պաղտատիցներու դէմ անոր պայքարին մէջ, յստակ դարձնելով, թէ եւրոպացիք կ'ընդդիմանան առոր եւ շեշտած, թէ համաշխարհային ման ամերիկեան տեսլականը Ճրանսան չի բաժնէր:

Ճրանսա, որ երկար

ատեն է վեր կը քննադատէ ՕԹԱՆԻ ծիրէն ներս ամերիկեան արտաքին քաղաքականութիւնը, ուժեղ կերպով զօրակց կանցնած է Սեպտեմբեր 11ի յարձակումներէն ետք ահաբեկչութեան դէմ Պոլսի արշաւին:

Անիկա լիովին զօրակց կանգնած է Աֆղանիստանի մէջ պատերազմին, գումակային օժանդակութիւն հայթայթելով:

Սակայն, Փարիզ մեծ մտաւախութեամբ յայտնած է Պոլսի անցեալ շարժումն իստեքի գծով, ուր ան Իրանը, Իրաքը եւ Հիւսիսային Գորհան «չարտեթեան առանցք»ի մը ծիրէն ներս ահաբեկչութիւն հովանաւորող երկիրներ կոչած է:

Վեռինի դիտել տուած է, որ Ուաշինկթընի հետ տրուութիւնը կը հաստատէ, թէ հանրապետական վարչակարգին արտաքին քաղաքականութեան հանդէպ մօտեցումը «միակողմանի է եւ ունի մէկ կողմ կարծիքը չ'առնէ»:

«Անիկա կրնայ շատ դրական երեւոյններ ունենայ, եթէ հակակշռուի, կանոնաւորուի եւ աւելի մարդկային դառնայ», շեշտած է ան:

### ՄԱԿԵՂՈՑԻԱ

## ՕԹԱՆԷՆ ՊԻՏԻ ՊԱՂԱՆՋՈՒԻ ԵՐԿԱՐԱԶԳԵԼ ԻՐ ԿԵՑՈՒԹԻՒՆԸ

ՍԸՈՓԻԷ, 6 (ՌՈՅԹԸՐԸ).- Մակեդոնիոյ կառավարութիւնը համաձայնեցաւ ՕԹԱՆԷՆ պահանջել, որ Մակեդոնիոյ մէջ իր գինուորներուն առաքելութիւնը երեք ամիսով երկարաձգէ, յայտնեց պետութեան բանբերը, Չորեքշաբթի օր: Ան ընդգծեց, որ վարչապետ Լիուպո Շոքրիեւսի ցամակ մը պիտի յղէ ՕԹԱՆԻ եւ պիտի պահանջէ խաղաղարար անոր առաքելութիւնը երկարաձգել:

Այս որոշումը վստահաբար ողջունելի պիտի ըլլայ միջազգային ընտանիքին կողմէ, որ անցեալ Օգոստոսի միջադարձի խաղաղութիւն հաստատեց երկրին մէջ:

Դիւանագետներ կը հաւատան, որ շրջանին մէջ ՕԹԱՆԻ ներկայութիւնը կարեւոր դեր կը խաղայ մաւ Մակեդոնիոյ մէջ պայտեկութեան ընդհանուր մթնոլորտի մը հաստատումին ի խնդիրը:

Մակեդոնիոյ պետութեան այս առաջարկը պիտի քննարկուի յառաջիկայ Ուրբաթ, երբ ՕԹԱՆԻ ընդհանուր քարտուղար Շոքր Ռոպրթսընը երկօրեայ այցելութեամբ ժամանէ Մակեդոնիա: Ռոպրթսընը Մակեդոնիոյ մէջ պիտի քննարկէ դաշինքին ընդարձակման հեռանկարները, ինչպէս մաւ վերատեսութեան պիտի ենթարկէ խաղաղութեան գործընթացը:

## ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ ԼԻԿԱՆ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ...

Շարունակուած 2րդ էջէն

## ՆԱԵՒ ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ ԵՊԻՍԿՈՒՍՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Մարոնի եպիսկոպոսներու խորհուրդը երէկ Սֆէյր պատրիարքի գլխաւորութեամբ գումարուած իր ժողովէն ետք հաղորդագրութեամբ մը նկատել տուաւ, որ խորհրդարանի վերջին նիստերուն, երեսփոխաններ արտախալուած են քաղաքացիներու դժգոհութիւնը՝ տիրող պայմաններուն դէմ, ինչ որ բազմաթիւ լիբանանցիներ մղած է գործադուլի դիմելու ընտրանքին:

Անհրաժեշտ է դարձանել տնտեսական, դրամական եւ ընկերային պայմանները եւ մեղմացնել քաղաքացիին բեռը, որովհետեւ ան գործ չի գտներ գործարաններու եւ ընկերութիւններու փակման պատճառով, ըսաւ հաղորդագրութիւնը:

Մարոնի եպիսկոպոսները հաւաստեցին, որ կացութիւնը պիտի չբարելաւորուի, այնքան ատեն որ քաղաքացիներու մէջ մասը լուսանցքի մէջ ձգուած է եւ արգիլուած է անոր մասնակցութիւնը՝ քաղաքական կեանքին, մինչ միւս մասը կը վայելէ հայրենիքի բարիքները: Եպիսկոպոսները հաստատեցին, որ այս մթնոլորտը հակաժողովրդավարական է:

## 2,1 ՄԻԼԻԱՌ ՏՈԼԱՐ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԵԳԻՊՏՈՍԻ

ՇԱՐՄԷԼԷՅԻՆ, 6 (ՌՈՅԹԸՐԸ).- Միջազգային նուիրատու երկիրներու խմբակը, 2,1 միլիարդ տոլար օժանդակութիւն տրամադրեց Եգիպտոսի, որպէսզի արաբական երկիրը կարենայ յաղթահարել տնտեսական դժուարութիւնները:

Շարմէլէյի մէջ տեղի ունեցած երկօրեայ ժողովին արտաքին, Եգիպտոս յայտնեց, որ նուիրատու երկիրները որոշեցին յառաջիկայ երեք տարուան համար 10,3 միլիարդ օժանդակութիւն տրամադրել, որուն 2,1 միլիարդ արագօրէն պիտի յանձնուի այս տարուան համար: Եգիպտոս նախապէս ըսած էր, որ անհրաժեշտ քայլերը առնելու համար կարիք ունի 2,5 միլիարդ տոլարի: Նուիրատու երկիրէ մը բարձրատեսիւն պաշտօնատար մը ըսաւ, որ Եգիպտոս հասաւ իր նպատակին 2,1 միլիարդ ապահովելով:

Մեկնաբաններ նախատեսած էին, որ Եգիպտոս դիւրութեամբ պիտի ապահովէ օժանդակութիւնը շրջանին մէջ իր ունեցած դերակատարու-

թեան եւ յատկապէս՝ Սեպտեմբեր 11ի դէպքերէն ետք ահաբեկչութեան դէմ արշաւին յայտարարած պարակցութեան համար: Երկօրեայ նիստերուն, նուիրատու երկիրները կոչ ուղղեցին Եգիպտոսի արագացնելու տնտեսական բարեկարգումներու գործադրութիւնը:

## ԼՈՆՏՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

Լոնտոնի սակարանին մէջ, դրամանշինքներու փոխանակման սակը հետեւեալն էր երէկ կէսօրին.

Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.	
Նուրթ	0.8674
Յրանսական ֆրանք	7.558
Քանադական տոլար	1.6042
Գերմանական մարք	2.2535
Հոլանդական ֆլորին	2.5391
Չեխոսլովակական ֆրանք	1.6954
Պելիքական ֆրանք	46.48
Իտալական լիր	2230.98
Ճապոնական ԵՄԵ	133.62
Շուեդական քուրոն	10.6165
Նորվեգական քուրոն	9.0104
Դանիական քուրոն	8.558
Մէկ սրբիլին	1.4121

## ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5072 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ԸՈՒԻՉՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱԿԱՅԵԱՑ
1. Ազնիւ խոնկ - Այբուբեն:	1. Ակադեմիկոս:
2. Դիմազուրկ - Նախ:	2. Նոյն տառերը - Անհարկը համեմատութիւն:
3. Թաց, խոնաւ:	3. Տրէ - Ինտոնեպիլոյ կղզիներէն:
4. Կարող - Էմիլ Զոլա:	4. Այրուբենէն - Ճառագայթներու բեկումնի կէտ:
5. Թոշակ կամ օրապահակ - Տառի մը անունը:	5. Անորոշ դերանուն - Հին վէրք - Այբուբենէն:
6. Աղամանդ - Մակերոն, սպանդանոց:	6. Ժխտական մասնիկ:
7. Գաղիչ, որաներու դէպ - Չտուած կարագ:	7. Կամարներով շինուած:
8. Հայկական ամիսներու 17րդ օրը - Շանի:	8. Իգական օտար անուն - Մաղիամի Թագաւորներէն:
9. Սատակ - Որովայնի կեղրոն:	9. Խորանի վրայ մատուցուած գոհ - Կրկնուած գիրեր:
10. Ծանօթ, իրագեկ - Շրջուած՝ ծառի կոճը:	10. Թերթի երես - Գլուխը կախ՝ հայ աղջիկ:

### ԹԻՒ 5071

### ԽԱՉԲԱՌՈՒՆ

### ԼՈՒԾՈՒՄԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Ո	Ղ	Ջ	Ե	Ր	Թ	Ա	Յ	Տ	
2	Վ	Ա	Ր	Կ	Ա	Ռ	Ն	Ա	Ք	
3	Ա	Տ	Ա	Յ	Ր	Գ	Ս	Ա	Ք	
4	Ս	Մ	Հ	Ե	Ր	Ա	Պ			
5	Ի	Ս	Ա	Յ	Ր	Գ	Ս	Ա	Ք	
6	Ս	Ա	Ր	Կ	Ո	Ս	Ա	Ք	Յ	
7	Գ	Գ	Ն	Պ	Ա	Ր	Ո			
8	Տ	Ո	Ղ	Ջ	Ե	Ր	Ա	Յ	Տ	
9	Ա	Յ	Տ	Ա	Ք	Յ	Ր	Ս	Ա	Ք
10	Լ	Ր	Ի	Ի	Է	Տ	Ս	Ա	Ք	

## ՍԱԿԱՐԱՆ

Պէյրութի սակարանին մէջ օտար դրամանշինքներու փակման սակագները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթակի	31,50 - 33,50	լ.ն.
Իրաքեան տիրար	50,00 - 51,00	լ.ն.
Պահրէյնեան տիրար	3990,00 - 4010,00	լ.ն.
Բուլղարեան տիրար	4906,42 - 4910,42	լ.ն.
Յորդանանեան տիրար	2125,42 - 2129,24	լ.ն.
Ա.Մ. Էմիրութեան տիրար	408,43 - 412,42	լ.ն.
Սեւուական ռիալ	399,90 - 403,99	լ.ն.
Օմանեան ռիալ	3900,00 - 3930,00	լ.ն.
Քաթարեան ռիալ	412,15 - 416,15	լ.ն.
Եգիպտական կինէ	323,72 - 327,72	լ.ն.
Անգլիական սթրլին	2136,70 - 2140,11	լ.ն.
Գերմանական մարք	678,47 - 682,84	լ.ն.
Հոլանդական ֆլորին	602,66 - 606,14	լ.ն.
Յրանսական ֆրանք	200,76 - 204,98	լ.ն.
Չեխոսլովակական ֆրանք	882,35 - 886,52	լ.ն.
Պելիքական ֆրանք	33,63 - 34,42	լ.ն.
Դանիական քուրոն	230,20 - 250,22	լ.ն.
Սպանական փէյթթա	8,02 - 9,04	լ.ն.
Թրքական լիր	3,62 - 3,64	լ.ն.
Կիպրական փաուստ	2266,85 - 2270,17	լ.ն.
Իտալական հապար լիր	687,65 - 691,70	լ.ն.
Ճապոնական հապար էէն	11034 - 11038	լ.ն.
Ամերիկեան հապար ֆրանք	2450 - 2451	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00	լ.ն.
Քանադական տոլար	943,40 - 947,85	լ.ն.
Աւստրալիական տոլար	768,85 - 772,70	լ.ն.
Եւրո	1303,95 - 1309,16	լ.ն